



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ը.

4 ՕԳՈՍՏՈՍ 1875



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԅ. ԳԱՎԱՅԵԱՆ

1875

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան Արարանեան	ժառանգ	Ա.	ԱՅԵՆԱԳՅՏ
Ռուսինեան	էֆէնտի	Բ.	»
Քրիստոստուր Ղազարոսեան	»	Գ.	»
Համբարձում Ս. Ալաճաճեան	»	Ա.	ԱՅԵՆԱԳՅՏ
Գարեգին Մելիքեան	»	Բ.	»
Պօղոս Պառնասեան	»	Գ.	»

Ձեռն ՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ		ԱՅԵՆԱԳՅՏ
Տ. Յովնանէս Բ. Մկրեան		
Նիկողոս Ալաճաճեան	էֆէնտի	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տիգրան Եսառֆեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳՅՏ
Գէորգ Սախարաճեան	»	
Ռուբէն Կիւմիւշկէրտանեան	»	

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

Քրիստոստուր Ղազարոսեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳՅՏ
Յովնանէս Ազնաւուրեան	»	
Բարսեղ Հալաճեան	»	

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ստեփան Պէլիկճեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳՅՏ
Յովնանէս Կասեան	»	
Սիմոն Միքայէլեան	»	

ՅԱՐԱՅԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Ասաբէյ Ալթուն Տիւրքի	էֆէնտի	
Տիգրան Կիւմիւշկէրտանեան	»	
Ողակէն Խօճատարեան	»	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Մատթէոս Վ. Իզմիրլեան		ԱՅԵՆԱԳՅՏ
Տ. Գրիգոր Բ. Աճէմեան		
Սենեքերիմ Մանուկեան	էֆէնտի	

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Շահապաղեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳՅՏ
Յովնէֆ Մալլումեան	»	
Ստեփան Փափաղեանց	»	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խաչատուր Միսաքեան	էֆէնտի	ԱՅԵՆԱԳՅՏ
Կարապետ Իւթիւճեան	»	
Յարութիւն Մէրեճեան-Գաւրի	»	

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ը.

1 ՕԳՈՍՏՈՍ 1875

ՆԱԽԱԳԱՀ. —

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

1. Գրիգոր Արքեպիսկ.
2. Խորէն « Նար Պէյ Բ. Պ
3. Ամբրոսիոս Վ. Ռուսինեանց Բ.
4. Գարեգին « Թաթարեան
5. Խորէն « Կիրոյեանց
6. Կարապետ « Սերոբեան Բ. Պ
7. Հմայեակ « Գիմաքսեան Բ. Պ
8. Մատթէոս « Իզմիրլեանց
9. Յովնանէս « Փափաղեան Բ.
10. Ներսէս « Ասլանեան
11. Պօղոս « Խօլտամեան
12. Եղիկ « Ապահոսեան Բ. Պ
13. Արիստակէս Բ. Մամբրեան Բ. Պ
14. Գէորգ « Արծրունի Բ. Պ
15. Գրիգոր « Աճէմեան Բ. 2
16. Խորէն « Փէշկովանեան
17. Յարութիւն « Սերոբեան Բ.
18. Յովնանէս « Մկրեան
19. Սուբիտ « Ստեփաննոսեան Բ.
20. Սահակ « Տ. Սարգսեան

ԱՏԵՆԱՐԶԱԿԱՆՔ

(Ա. Վ. Ճակ)

- Գոռմզափոխ, Կեսիկ փաշա եւ  
Գոռմզափոխի դռնը
21. Գրիգոր Պէրպերեան Բ. Պ

- Բ. Բացակայութիւն առաջին :
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :
- Բ. Պ Բացակայութիւն բանաւոր պատճառաւ :
- ՀԲ. Հրատարեալ :

22. Գէորգ Սախարաճեան Բ.
23. Խաչիկ Մանուկարեան Բ.
24. Կարապետ Ազարդճաճեան Բ.
25. Համբարձում Մազպուլեան
26. Մինաս Գափամաճեան Բ.
27. Յովնանէս Խօրտամեան Բ.
28. Յովնանէս Պոլաճեան
29. Յովնանէս Սուրենեան Բ. 2
30. Ն. Մէլքոնեան Տարթոր
31. Պօղոս Պառնասեան Բ. 2
32. Պետրոս Քէրէսթէճեան
33. Ռուսինեան
34. Սարգիս Ազարէղեան Բ. 2
35. Սահակ Ապրո Բ. 2
36. Սենեքերիմ Մանուկեան Բ.
37. Փէշտամաճեան Տարթոր Բ.

(Բ. Վ. Ճակ)

Պէշիքիմաշ

38. Բարսեղ Հալաճեան Բ. Պ
  39. Կարապետ Ս. Իւթիւճեան
  40. Յարութիւն Մարգարեան
- ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ
41. Խաչատուր Ղազարոսեան Բ. 2
  42. Կարապետ Գ. Փափաղեան
  43. Մարութեան Յրէնկեան
  - 44.

Խաչիկափոխ Ս. Խաչ

45. Յովնանէս Շահեան Բ.
46. Յովնէֆ Ս. Մալլումեան
47. Սերոբէ Պառնասեան
48. Ստեփան Ասլանեան

- Խաչիկափոխ Ս. Կարապետ
49. Միհրան Պահաճեան Բ. 2
  50. Յովնանէս Ճիւղճեան
  51. Նիկողոս Ալաճաճեան
  52. Տրդատ Փափաղեան (Գ. Վ. Ճակ)

Բերս

53. Արիկ Ունճեան
54. Գրիգոր Սէլիմեան
55. Մարտիրոս Յ. Տիւլեան
56. Միքայէլ Մանուկեան
57. Նշան Քաղաղեան Բ.
58. Ստեփան Խնդիրեան
59. Տէլմաք Մ. Երեմեան Բ. Պ
- 60.
- 61.

Քասրա փաշա

- 62.
- Միշափոխ
63. Կարապետ Պ. Պէրեանց Բ. Պ
  64. Յակոբ Կոստանդեան Բ. Պ
  65. Յակոբ Պ. Նորատուկեան
  66. Յովնանէս Ազարէղեան
  67. Տիգրան Եսառֆեան Բ. Պէշտամաճեան Ս. Պէրէճեան Բ. Պ
  68. Յարութիւն Մէրեճեան-Գաւրի Բ. Պ

(Գ. Վ. Ճակ)

- Ղոգոսնանիս եւ Իմատիկ
69. Յովնանէս Կասեան Բ.
  70. Ստեփան Պէշիկճեան









թիւն մը չեղաւ մանաւանդ որ Պատրիարքանի մէջ կարելի եղածին չափ ներքին բարեկարգութեան մը համար պէտք էր ծախքն աւելնար, եւ ինչպէս որ կը տեսնուի շատ քիչ առաւելութեամբ մը արձանագրութեան եւ վիճակագրութեան դիւաններ աւելցած են եւ դաստիարակութեան համար տարեկան 36000 դրչ. ի գումար մը սահմանուած է թէեւ, բայց ազգային տուրքը եթէ պիւտճէին մէջ նշանակուած գումարէն աւելի արդիւնք յառաջ բերէ, եւ այս աւելորդն եթէ վաթսուն հազար դուրուն անցնի, այս տարուան համար վաթսուն հազար դուրուն ազգային դաստիարակութեան պիտի յատկանայ:

Իսկ Պատրիարքարանի մէջ կերակրոյ պատճառաւ եղած խառնաշփոթութիւնն ալ բոլորովին վերցած է:

Այսպէս ներկայ տարւոյ մէջ՝ ազգային մատուկը՝ ըստ հաշուեկշռի 327180 դուրուն ծախս պիտի ունենայ, եւ հասոյթն զայն պիտի հակակշռէ:

Այս բացատրութիւններէն ինչպէս պատկառելի ժողովդ կը տեսնէ, ազգային վար-

չութիւնը հաշուեկշռին պատրաստութեան ատեն երկու բան կէտ նպատակի ունեցած է իրեն, եւ այն է նախ՝ Պատրիարքարանի ներքին բարեկարգութիւնն ապահովելու, եւ վարչական գործերը ընթացիկ, ամիսով եւ օրինաւոր վիճակի մէջ գնելու համար պէտք եղած անխուսափելի ծախքերն անտես չառնել, եւ երկրորդ՝ հասութից քանակութիւնը ըստ կարելոյն այն աստիճանին վերածել, որով ելմտից վիճակը հաւասարակշռութեան մէջ մնայ. հետեւապէս ազգային վարչութիւնն այս նպատակաւ Տնտեսական խորհրդոյ եւ Ելեւմտից հողաբարձութեան հետ երկար քննութիւններ ընելէ ետեւ, պատրաստած է սոյն հաշուեկշռը, զոր կը մատուցանէ պատկառելի ժողովոյդ ի վաւերացումն:

1 օգոստոս 1875

Մնամք յարգանօք

Ի զիմաց Ազգ. վարչութեան Քաղ. ժողովոյ

Արեւ-դոյն

Մ. ՄԱՄԻԿՈՆԻԱՆ

Փոփ Արեւ-պետ

ԿԱՐԱՊԵՏ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

# Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

1875-76 տարւոյ

## ՀԱՍՈՑԹ

	Վ. Ի Ճ Ա Կ 1873-74	Վ. Ի Ճ Ա Կ 1874-75	Վ. Ի Ճ Ա Կ 1875-76
Վագֆի իջնոխտակրներ	123960	131930	130000
Նշանտոքի հասոյթի կեսը	49052	45518	50000
Հրամանի հասոյթ	23480	24527	28000
Դիւանական եւ դատաստանական վճարներու հասոյթ	9370	12727	20000
Մոռգաթա	33350	27192	75000
Քանչիկր	14814	12466	22000
Ժնկոց եւ վախճանմանց հասոյթ	495	530	1500
Ազգային ժողովոյ ստեղծագրութեանց տնտրակներ	430	1189	3000
Կեդրոնական տոքք յետ գեղջման հասարման ծախոց	156475	159775	200000
			529500



	Վ. Ի. Ճ. Ա. Կ 1873-74	Վ. Ի. Ճ. Ա. Կ 1874-75	Ա Մ Ս Ա Կ Ա Ն Ք	Վ. Ի. Ճ. Ա. Կ 1875-76
Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր երթևեկութեան, ընծայի եւ կարի ծախքովը հանրերն	132510	133049	7500	90000
Պատրիարքարանի պաշտօնէից ամսականք	203610	209023	23380	280560
Պատրիարքարանի յարկերոյ եւ դատարարութեան ծախսոց համար		18000	3000	36000
Հիւանդանոցի ամսական Պատրիարքարանէն Ս. Յ. Երանայ վանքը պրիոնած հիւանդանոց համար			1000	12000
Յատկացեալ ամսականք. Արիստակես արքայականի			700	8400
Ալիքսան Է. Ս. Արքայականէն			500	6000
Պեպեքի Ս. Մարիամի			150	1800
Պոռիպի Ս. Վարդապետի			100	1200
Հեռագրի եւ թղթատարի	10383	11815		12000
Դիւանական պիտոյք	5267	8220		6000
Կարասիք եւ նորոգութիւնք (նորոգութիւն քարակիր սենեկի)	4621	4006		15000
Չանազան սպարապետի եւ Ընդհանուր Ժողովոյ ամենագրութիւնք	23564	22740		25000
Չանազան ծախք արտաքոյ կարգի. Պատրիարքարանի Խանուկի ծախք	6946	14150		10000
Հանրերնագրին 6 եւսարմիներու	2800	9813		6600
Երթևեկութիւն եւսարմիներու	3400	5811		6000
Նշանատրի ծախսոց կիսք	5150	4956		5600
Կարօտելոց ամսական ծախք եւ ողորմութիւն	1954	4092		5000
			527160	
			2340	
			529500	

Յանդեալ

Ի դիմաց Ազգային Վարչութեան  
Քաղաքական Ժողովոյ

Ատենագիր  
Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Փ. Ատենագետ  
Կ. Գ. ՓԱՓԱՋԵԱՆ

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Վերստիննաւ Սահմանադրութեան. — Երկրորդ ընկերացումն առաջինէն խորհրդի արտադրութեան. — Վերստիննաւ Ա. յօդուածոյ իրոյ, որ պարտաւէ զարտաւարութեան ծախսոց, խորհրդոց Լ հարցադրութեան կազմակերպութեան լիցենզիան:

ԱՍՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւաստիկ Օրակարգը. ահաւաստիկ վերստին մեր մեծ խնդրոյն առջին եկանք. կը յիշէք որ նախորդ նիստին վիճարանութիւնը՝ որ վարչական կազմակերպութեան առաջին յօդուածին վրայ էր, այնքան յառաջ դնաց որ ուր ուրեմն երկու մեծ հակադէմ առաջարկութիւնք՝ մին Վերաքննիչ յանձնաժողովին, եւ միւսը Իւթիւնեան էֆէնտի կողմէ, դէմ առ դէմ եկան կեցան մեր առջին. եթէ այս նիստին ուրիշ առաջարկութիւններ գային մեզ, ժողովը ամենքը մէկէն նկատողութեան պիտի առնէր:

Արդէն Իւթիւնեան էֆէնտի գրաւոր ներկայացուց իւր առաջարկութիւնը. ֆափագեան էֆէնտի եւ անոր հետ ուրիշ երեսփոխանաց կողմէ ստորագրեալ առաջարկութիւն մ'ալ եկաւ. այս երկուքէն զատ ուրիշ առաջարկութիւններ ալ ուրիշներու կողմէն կուգան հետզհետէ Գիււանին, եւ այսպէս ահաւաստիկ կուսնենանք եօթ նոր առաջարկութիւնք, զորս ժողովը հետզհետէ պիտի լսէ հիմա:

Առաջարկութեանց ընթերցումը կակսի եւ կկարդացուի:

Ա. Իւթիւնեան էֆէնտի առաջիննաւ  
Վսեմափայլ Ատենագետ  
Ազգային Ժողովոյ

Վարչական ժողովոց եւ խորհրդոց կազմակերպութեան վրայ նախընթաց նստին մէջ ըրած առաջարկութիւնս՝ ըստ պահանջման կանոնադրութեան՝ ձեւակերպեալ եւ գրաւոր ներկայացնելու առթիւ՝ հարկ կը համարիմ քանի մը բացատրութիւն տալ, որպէս զի խնդիրն իւր կատարեալ պարզութեամբ ներկայանայ պատկառելի ժողովոյս ուշադրութեան:

Ինչպէս որ հնդեատասանանայ փորձառութեամբ յայտնի եղած է, եւ ինչպէս որ տասն տարիէ ի վեր հետզհետէ կազմուած Վերաքննիչ յանձնաժողովոց ամենն ալ առանց բա-

ցատութեան ճանչցած եւ հաստատած են, եւ ինչպէս որ նախընթաց նստին մէջ եղած լուրջ վիճարանութիւններէն ալ ակներեւ տեսնուեցաւ, մեր ներկայ վարչական ժողովոց եւ խորհրդոց կազմութիւնն Ազգին վիճակին եւ պիտոյից պատասխանելէ հետի է: Ինչ է պատճառը. կրկնելու հարկ չկայ, վասն զի ամենուս ծանօթ է. բայց նորէն յիշեմ համառօտիւ:

Նախ՝ 90 ի մօտ կարող, ձեռնհաս եւ յօթարափոյթ պաշտօնաւորներ դանելու մեծ դժուարութիւնը:

Բ. Ժողովոց եւ խորհրդոց իրաւասութեան կամ ձեռնհասութեան սահմաններուն ճշգիւ որոշուած չըլլալէն, (եւ այս դրութեամբ անհրնար է որոշել), յարաբերութեանց եւ պատասխանատուութեանց շփոթ եւ կեղակարծ վիճակը:

Գ. Տեսուչ խորհրդոց Քաղաքական ժողովոյ իրաւասութեանը ենթարկեալ ըլլալուն պատճառաւ (եւ այս ալ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ) ինքնին անկախաբար չկրնալ գործելու բնական հարկը, միւս կողմանէ Քաղաքական ժողովոյ ալ նոցա որոշումներն ինքնին չկրնալ փոխելու դիրքը որով շատ անգամ ամենապարզ բայց կարեւոր եւ ստիպողական իսկ խնդիրներ Տեսուչ խորհուրդներէն առ Քաղաքական ժողովն, եւ ժողովէն ալ առ խորհուրդս կը տարուբերին, եւ այս դիւանական երկար պայտաներուն եւ թղթակցութեանց, ինչպէս նաեւ Քաղաքական ժողովոյ գրազմանց շատութեան պատճառաւ, ինչպէս որ խիստ լաւ նկարագրեց նախընթաց նստին մէջ Արժ. Մատթէոս վարդապետ Իզմիրեան, ազգին ամենէն կարեւոր գործերն ամիսներով անլոյծ կը մնան, ի վնաս Ազգին:

Այս թերի, սխալ, եւ ներուի ինձ նաեւ ըսել, ազգաշնաս դրութիւնը դարձանելու համար՝ հարկ ի վերայ կայ մեր վարչական կազմութիւնը պարզ, եւ միանգամայն գործնական դրութեան մը վերածել, մեզնէ անհամեմատ աւելի յառաջադէմ եւ փորձառու ազգաց օրինակին հետեւելով, այն է՝ ժողովոյ մը իրաւասութեան վերաբերեալ գործոց տնօրէնութիւնը նոյն ժողովին յանձնել՝ աշխատութեանց բաժանման դրութեամբ հասուածներու կամ մասնաժողովներու բաժնելով զայն. իմ առաջարկածս ալ այս է:

Քաղաքական ժողովն՝ ըստ որում տեսուչ

եւ տնօրէն ազգային ամեն տեսակ աշխարհա-  
կան կամ քաղաքական գործոց, իւր իրաւա-  
սութեան ենթարկեալ գործոց տեսակին հա-  
մեմատ քանի մը մասնաժողովներու բաժնել,  
եւ այն գործոց տնօրէնութիւնն ուղղապէս ա-  
նոր յանձնել:

Այս եղանակաւ, ինչպէս որ նախընթաց  
նստին մէջ ալ հաստատած եմ, պարզ եւ գործ-  
նական ձեւ մը կառնու վարչական գրութիւնը .  
յարաբերութեանց եւ պատասխանատուու-  
թեանց շիտթութիւնը կը վերնայ, բազմաթիւ  
ձեռնհաս եւ յօժարախոյժ պաշտօնաւորներ  
գտնելու գժուարութենէն կազատինք, եւ Ազ-  
գին գործերն աւելի դիւրաւ, աւելի շուտով  
եւ աւելի կանոնաւորութեամբ կը կատարուին:

Փոխանակ արդի ֆողաքական ժողովին,  
որ շարաթը միանգամ քանի մը ժամ նիստ ը-  
նելով, ուղղապէս իրեն եկած գործերէն զատ՝  
Տեսուչ խորհրդոց եւ հոգաբարձութեանց կող-  
մէ եկած խնդիրներն, առաջարկութիւններն,  
որոշումներն ու տեղեկագրութիւնները քննելու  
հարկին մէջ կը գտնուի եւ բնականաբար չը  
կընար հասնիլ. կունենանք Քաղաքական ժո-  
ղով մը, որոյ երեք կամ չորս մասնաժողովները  
շարաթը մէկ մէկ անգամ գումարուելով եւ  
իւրաքանչիւրն իւր ձեռնհասութեան վերաբեր-  
եալ գործոց ղրաղելով, եռապատիկ կամ քա-  
ռապատիկ աւելի գործ կը տեսնէ, ուղղապէս  
պատասխանատու եւ համարատու ըլլալով ազ-  
գային ժողովոյ:

Ինչպէս յայտնի է, մեր ազգային Վարչ-  
ութեան քաղաքական մասն երեք տեսակ գործ  
ունի իւր տեսչութեան եւ տնօրէնութեան  
յանձնուած:

1. Ազգային դատարարական եւ վար-  
ժարանաց տեսչութիւն եւ ասոնց վերաբերեալ  
խնդրոց տնօրէնութիւն:

2. Ազգային ելուժտից եւ հաստատու-  
թեանց բարեօր տնտեսութեան հսկողութիւն  
եւ ասոնց վերաբերեալ խնդրոց տնօրէնութիւն:

3. Ազգին մէջ ծագած ներքին եւ արտա-  
քին վէճերու, դատերու, բողոքներու, որոց  
կարգն են նաեւ դաւառական իշխանութեանց  
նկատմամբ եկած գանգատներն ու բողոքները,  
քննութիւն եւ տնօրէնութիւն: Այս երեք տե-  
սակ գործոց տնօրէնութեան համար հարկ կըլ-  
լայ Քաղաքական ժողովը երեք մասնաժողովնե-  
րու բաժնել՝ կրօնական, տնտեսական եւ դա-

տական, երեքն ալ հաւասարապէս ձեռնհաս ի-  
րենց բաժնին ինկած գործերը Պատրիարքին  
նախագահութեամբ տնօրինելու, իւրաքանչիւ-  
րն իւր պատասխանատուութեան ներքեւ:

Այս բաժանումը տուած եմ Քաղաքական  
ժողովոյ իմ առաջարկութեանս մէջ, քաջ հա-  
մոզմամբ թէ քաղաքական Վարչութեան այս  
երեք ճիւղերը բաւական են Ազգին բոլոր գոր-  
ծերը կանոնաւորապէս եւ դիւրութեամբ տը-  
նօրինել, հարկ եղած ժամանակ առժամանակ-  
եայ յանձնախումբեր գործակից առնլով իրենց .  
ինչպէս որ նշանակած եմ առաջարկութեանս  
մէջ, եւ այս հարկն ալ խիստ քիչ անգամ կը  
պատահի սոյն գրութեամբ:

Ոմանք կառաջարկեն որ յարաբերական  
կամ բարեկարգական ճիւղ մ'ալ ունենայ Վար-  
չութիւնը: Այս առաջարկութեանց վրայ եր-  
կար խորհելով տեսայ որ Ազգին յարաբերա-  
կան գործերը վերոյիշեալ երեք ճիւղերուն մէջ  
կը բովանդակին, այսինքն, մեր արտաքին  
յարաբերական գործերն, ինչպէս որ իրաւամբ  
ըսաւ նախընթաց նստին մէջ Մեծ Մ. Մամի-  
կոնեան էֆէնտի, մեծ մասամբ վանական,  
ելմտական, կալուածական եւ կտակային այ-  
սինքն տնտեսական խնդիրներ են, որք յա-  
րաբերութեանց նիւթ կընծայեն շատ անգամ:

Ար մնան վէճերու, բողոքներու եւ գան-  
գատներու վերաբերեալ յարաբերական գոր-  
ծերը, ասոնք ալ բնականաբար դատական  
ճիւղին կը վերաբերին, ինչպէս նաեւ բարե-  
կարգականը. հետեւաբար յարաբերական կամ  
բարեկարգական ճիւղ մ'ալ սահմանելու բնա-  
պէտք չկայ:

Գալով վարչական ժողովոց անուանակո-  
չութեան կամ յորջորջման, թէ եւ խորհուրդ  
անունն աւելի պատշաճ եւ բանաւոր կը թուի  
ինձ ալ, բայց ես՝ կանխակալ սովորութեան  
հետեւելով՝ ժողով եւ մասնաժողով անունները  
տուած եմ, թողով պատկառելի ժողովոյս  
ընտրութեան:

Վերջապէս իմ ներկայացուցած առաջար-  
կութեանս մէջ երեք գլխաւոր առաւելութիւն  
կայ.

- 1. Վարչական կազմութեան պարզութիւն.
- 2. Ազգային գործոց դիւրաւ եւ արագ  
տնօրէնութեան.
- 3. Պատասխանատուութեանց ապահովու-  
թիւն:

Այս երեք տիտղոսով կը ներկայացնեմ ա-  
ռաջարկութիւնս պատկառելի ժողովոյս իմաս-  
տուն քննութեան ու տնօրէնութեան, մնալով

Կ. Պոլիս միշտ անձնուէր սիրելի եւ  
1 օգոստ. 1875 պատուական ազգիս  
Ազգային երեւոյթեան  
Կ. Ս. ԻԻԹԻՆՃՈՒՆ

Ազգային կեդրոնակէտ Վարչութիւն  
Ա.  
Կաշմութիւն

Յօդ. 1. Ազգին վարչական իշխանութիւ-  
նըն երկու վարչական ժողովոց յանձնուած է,  
կրօնական եւ քաղաքական, ընդ նախագա-  
հութեամբ Պատրիարքին:

Յօդ. 2. Կրօնական ժողովը կը բաղկանայ  
եօթն ձեռնհաս եւ արժանաւոր, այսինքն ե-  
կեղեցւոյ օրինաց, կարգաց կանոնաց եւ ա-  
ւանդութեանց հմուտ եւ ի վարս անբամբաս  
եկեղեցականներէ, որք պիտի ըլլան մէկ եպիս-  
կոսոս, երկու վարդապետ եւ չորս քահանայ,  
Ազգային ժողովէն ընտրեալ:

Յօդ. 3. Քաղաքական ժողովը կը բաղկա-  
նայ ազգային գործոց եւ տէրութեան օրինաց  
տեղեկ քսան եւ մէկ պատուաւոր եւ կարող  
աշխարհականներէ, ազգին կրթական, տնտե-  
սական եւ դատական գործերը տնօրինելու  
համար, եւ իւր պաշտօնին այս երեք ճիւղե-  
րուն համեմատ երեք մասնաժողովոց կը բաժ-  
նուի իւրաքանչիւրն եօթն ձեռնհաս անգամ-  
ներէ բաղկացեալ, որք Ազգային ժողովէն  
կընտրուին:

Յօդ. 4. Իւրաքանչիւր մասնաժողով իւր  
մասին մէջ ձեռնհաս՝ ազատօրէն կը գործէ իւր  
մասնաւոր դիւանին առաջնորդութեամբ եւ  
Պատրիարքի նախագահութեամբ:

Յօդ. 5. Կրօնականէ եւ քաղաքականէ խա-  
ռըն խնդրոց համար Կրօնական ժողովը կը մի-  
անայ Քաղաքական ժողովոյ այն մասնաժողո-  
վին հետ, որոյ ձեռնհասութեան կը պատկանի  
խնդրոյն քաղաքական մասը: Նոյնպէս երկու  
մասնաժողովոց միանգամայն ձեռնհասութեան  
վերաբերեալ խառն խնդիրներն երկու մասնա-  
ժողովի միանալով կը տնօրինեն:

Յօդ. 6. Հանրական կարեւորութիւն ու-  
նեցող խնդիրները Քաղաքական լիազուժար ժո-  
ղովով կը տնօրինուին. ինչպէս նաեւ այն ծանր

խնդիրներն՝ որոց տնօրէնութեան պատասխա-  
նատուութիւնը միայնակ ստանձնել չուզէ մաս-  
նաժողով մը:

Բ.  
Պաշտօնէ Լ պարտաւորութիւն  
Չարեւիկ ժողովոց Լ մասնաժողովոց

Յօդ. 7. Կրօնական ժողովոյ պաշտօնն ու  
պարտականութիւնները նոյն են ինչ որ արդէն  
տրամադրած են Սահմանադրութեան 28, 29,  
30, 31, 32, 33, 34 եւ 35 յօդուածները:

Յօդ. 8. Քաղաքական ժողովոյ ընդհանուր  
պաշտօնն է Ազգին կրթական, տնտեսական եւ  
դատական գործերը տնօրինել, իւր կրթական,  
տնտեսական եւ դատական մասնաժողովոց մի-  
ջոցաւ, կամ լիազուժար ժողովով:

Յօդ. 9. Քաղաքական ժողովը երբ իրեն  
եկած քաղաքական գործերէն կարեւոր խնդ-  
րոյ մը լուծուին իւր ձեռնհասութեանէն վեր  
գատէ, Ազգային ժողովոյ կը դիմէ:

Յօդ. 10. Կրթական մասնաժողովոյ պաշ-  
տօնն ու պարտականութիւնները նոյն են ինչ  
որ Սահմանադրութեան 45-րդ յօդուածը տրա-  
մադրած է:

Յօդ. 11. Տնտեսական մասնաժողովոյ պաշ-  
տօնն է ազգային ելուժտից մատակարարութիւ-  
նը, Հիւանդանոցի տնօրէնութիւնը, ազգային  
վանօրէից, եկեղեցեաց, վարժարանաց եւ այլ  
ամեն հաստատութեանց եւ կալուածոց տնտե-  
սական վիճակին տեսչութիւնն, ազգային կը-  
տակաց ճշգիւ գործադրութեան հսկողութիւնն,  
եւ ասոնց վերաբերեալ խնդրոց քննութիւնն  
ու տնօրէնութիւնը ըստ հրահանգաց Սահմա-  
նադրութեան 46, 48, 49, 50, եւ 51 յօդ-  
ուածոց, որք սոյն յօդուածին տրամադրու-  
թեան համեմատ պէտք է բարեփոխին:

Յօդ. 12. Տնտեսական մասնաժողովը ազ-  
գային ելուժտից եւ հիւանդանոցի մատակա-  
րարութիւնն երեքական անգամէ բաղկացեալ  
երկու հոգաբարձութեանց կը յանձնէ, իւր ան-  
միջական հսկողութեան ներքեւ յատուկ կա-  
նոններով:

Յօդ. 13. Գատական մասնաժողովոյ պաշ-  
տօնն է ազգին մէջ ծագած եւ Վարչութեան  
ներկայացած բողոքները, վէճերն ու դատերն  
արդարութեամբ քննել եւ վճառար տնօրինել:  
Նոյնպէս ազգին բարեկարգութեանը վերաբեր-  
եալ խնդիրները քննել ու տնօրինել:

Նոյն մասնաժողովն երկու իրաւագէտ եւ պատուաւոր աշխարհական կընտրէ, որք կրօնական ժողովոյ կողմէն ընտրեալ երկու ձեռքնհաս քահանայից հետ եւ Պատրիարքական փոխանորդին նախագահութեամբ ազգային նախական ատենը կը կազմեն, ուր ազգային ընտանեկան վէճերուն եւ Բ. Դրան կողմէն Պատրիարքարան յանձնուած գատերուն նախաքննութիւնը կը ըլլայ, եւ եթէ գատ վարողը կամ վիճողք իրաւախոհ չըլլան, ատենան իւր տեղեկագրով գատը կը յանձնէ բարձրագոյն ատենին (գատական մասնաժողովոյ):

Յօդ. 14. Վարչական ժողովք եւ մասնաժողովք իրենց ներկայացեալ կնճռալից կամ երկար քննութեանց կարօտ խնդրոց քննութիւնն, ինչպէս նաեւ վարչական ծրագրաց, կանոնադրութեանց եւ հրահանգաց պատրաստութիւնը քանի մը ձեռնհաս անձերէ առժամանակեայ յանձնախումբերու կը յանձնեն, եւ նոցա գործակցութեամբ կը կատարեն:

Յօդ. 15. Վարչական ժողովք եւ մասնաժողովք իրենց անօրինաձ բոլոր գործերուն համար իրենց նախագահ Պատրիարքին հետ ի միասին պատասխանատու են առաջի Ազգային ժողովոյ եւ տէրութեան. ուստի եւ ամեն տարեկուս պարտական են գրաւոր համարատուութիւն ներկայացնել Ազգային ժողովոյ: Սոյն համարատուութիւնը 4 մասն պէտք է պարունակէ, եւ իւրաքանչիւր մասին մէջ՝ ժողով կամ մասնաժողով, ինչպէս նաեւ անոնց նախագահ Պատրիարքը՝ պէտք է ստորագրութիւն դնեն ի միասին իբրեւ միապէս պատասխանատու:

Ընտրութիւն վարչական ժողովոյ

Ընտրութիւն կրօն. ժողովոյ

Յօդ. 16. Կրօնական ժողովոյ ընտրութեան եղանակը նոյն է ըստ առաջնոյն. միայն թէ համագումար Եկեղեցական ժողովէն եկած ընտրելեաց ցանկը՝ փոխանակ երեքպատիկ ընտրելեաց՝ կրկնապատիկ ընտրելի ներկայացնէ:

Ընտրութիւն Գաղափար. ժողովոյ

Յօդ. 17. Ազգային ժողովոյ Մ. Դիւանին Ա. Ատենապետը, նախաքննիչ զիւանաց ատենապետներուն հետ Պատրիարքի նախագահութեամբ Ընտրողական ժողով կազմելով, Քաղաքական ժողովոյ մէջ մի մասնաժողովոց համար կրկնապատիկ թուով ընտրելեաց ցանկ կը

պատրաստեն եւ Ազգային ժողովոյ կը ներկայացնեն, որ սոյն ցանկերուն մէջէն եօթնական անձինք կընտրէ իւրաքանչիւր մասնաժողովոյ համար:

Յօդ. 18. Վարչական ժողովոց անդամներն երկու տարին անգամ մը կը փոխուին, առանց անմիջապէս վերընտրելի ըլլալու:

Բ. Փոփոխութիւն Եկեղեց. — Գաղափար. — Ընտրութիւն

Վարչական կազմակերպութեան մասին Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութեան վերայ հետեւեալ բարեփոխութիւնը կ'առաջարկենք:

« Աւսումնական, Տնտեսական եւ Վանօրէից խորհրդոց եւ Կտակաց հոգաբարձութեան միացմամբ Տեսուչ խորհրդոյ մը կազմութիւնն ընդունելով, այս Տեսուչ խորհուրդն ընտրուի Կրօնական եւ Քաղաքական խառն ժողովոյ ներկայացուցած զեղչելի ցանկին վրայ Ազգային ժողովէն, եւ համարատու ըլլայ Ազգային ժողովին:

Տեսուչ խորհուրդը զուտ կրօնական խընդրոց համար Կրօնական ժողովին, Բ. Դրան հետ ըլլալիք յարաբերական գործոց համար Քաղաքական ժողովին, եւ խառն խնդրոց համար Խառն ժողովին կը դիմէ:

Թէ Կրօնական եւ Քաղաքական ժողովոց եւ թէ Տեսուչ խորհրդոյ պաշտօնավարութեանց եւ իրարու հետ յարաբերութեանց համար վարչական կանոնադրութիւն մը հաստատուի Ազգային ժողովէն:

1 Օգոստ. 1875

Ս. Գ. Գ. ՓԱՓԱՋԱՆՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ  
ՆԻԿՈՂՈՍ ԱԼԱՏԱՏԵՆՆ ՄԻՆԱՍ ՃԱՅՏԱՅԵԱՆ  
ՏՐԴԱՏ ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ՊԵՏԼԻԿՏԵԱՆ  
Ե. ՏԻՂԱՏԵԱՆ ԻՈՐԷՆ Վ. Գ. ԿԻՐՈՅԵԱՆ

Գ. Աւելիութիւն Եկեղեց. — Գաղափար. — Ընտրութիւն  
Ամենապատիւ նախագահ Արքայան  
եւ մեծապատիւ Երեսփոխանք

Մեր Սահմանադրութեան ընթացքին զըժուարութիւնները, ըստ իմ տկար կարծեաց, զլիսաւորապէս հետեւեալ երկու կէտերն են. Քանզի նախ խորհելու եւ գործելու զաղաքաբը իրարու հետ շփոթուած ըլլալով, որոշող ու գործադրող, կամ պատուիրող ու կատարող պաշտօնները՝ միօրինակ խումբերու յատկացած

են, եւ այն ալ քուէի բովէն պատահաբար զիրար ճանչող անձինքներէ կազմուած, որ շատ անգամ անյարմար կարծիքներէ բաղկանալով մէկզմէկ կաշկանդել կամ ընդունայն յոգնեցնելով ատեն անցնելու կը ծառայեն, եւ գործերուն կարեւորագոյններն իսկ երեսի վրայ մընալով սահմանադրական գեղեցիկ գրութիւնը ռամկային եպերանաց կ'ենթարկուի: Եւ երկրորդ՝ մեր ընդհանուր անհոգութեանը պէս Սահմանադրութիւնն ալ որ եւ իցէ կերպիւ աշխատանք փոխարինելու կէտին անհոգ կենալն, որ մարդկային յօժարութիւնը ձոռնալով ժրութեան շարժառիթ կամ զսպանակը սոսկ ազգասիրական զգացմանց յանձներ է:

Ուստի այս բնական խոչընդոտները բառնալու գիտամբ կ'առաջարկեմ որ անօրէն բարձրագոյն ատենը, այսինքն Քաղաքական ժողովը միայն եօթը կամ ինը անդամներէ բաղկանայ եւ գործադիր պաշտօնները իր գաղտնիքով մէկմէկ մարդու յանձնէ՝ տնտեսապետ, ուսումնագետ եւ այլն անուամբ, եւ այս պաշտօնատարները իրենք իրենց կարծեկից երկերկու անձինք ընտրեն ու անոնց հետ գործակցին, միշտ առանձին պատասխանատու մնալով. միանգամայն պէտք է արարողական (Թէչրիֆաթ) մասնաւոր կանոն մը սահմանել՝ որպէս զի պաշտօնատարք իւրաքանչիւր աստիճանի մենաշնորհ մ'ունենան, զոր օրինակ ազգային բոլոր ակումբներու մէջ նիւթական նշան մը կրել՝ կամ այլ ինչ արտօնութիւն մը վայելել՝ եւ այլն:

Այս վերջին կէտը թերեւս թեթեւ խօսք մ'երեւայ, բայց պէտք է նկատել թէ ընդհանրապէս ընդունուած զանազան ասպետական կարգերն ու նշաններն ինչի կը ծառայեն, մանաւանդ որ մեր ազգային անձուկ վիճակն ալ չի ներէր որ գոնէ դրամական թոշակ մը վճարելով պաշտօնատէրերը ոգեւորէ: Իսկ առաջինը՝ այսինքն վարչական մեքենային կազմակերպութեան ձեւը՝ թերեւս յանկարծ նկատմամբ միապետական գրութիւն մ'երեւայ, բայց հանգարտ ու երկար խորհրդածութեամբ կրնայ յայտնուիլ թէ, գործերուն ընթացքը զանազան արգելքներէ՝ եւ պատասխանատուութիւնը այլ եւ այլ պատրուակներէ ազատելու համար՝ ասկէց ուրիշ միջոց մը չի կրնար ըլլալ, եւ այս ճշմարտութիւնը բացատրելու երկար փաստերը աւելորդ կը համարիմ, որովհետեւ գործապետութիւնը՝ թէեւ իշխանական իմաստ մ'ալ կը պարունակէ, բայց վերոյիշեալ պայ-

մանին մէջ այնպէս չի նշանակէր, եւ անունն խրաչելով արդիւնքն ուրանալը աւելորդ է, եւ եթէ կարելի ըլլայ այս գործադիր պետերը բարձրագոյն ժողովոյ անդամներէն գտնել՝ աւելի լաւ կ'ըլլայ որ հոն աթոռ ու ձայն ունելով, իրենց պաշտամանց վերաբեւեալ պատահական խնդիրները համարձակ քացատրելով պաշտպանելու՝ եւ շուտով որոշում ընդունելու գիւրութիւն կ'ունենան. սակայն կրկնակի պաշտօնով անձանձիր շարաթիւն երկու օր զօնելուն հարկը թերեւս այս ձեւին դժուարութիւն յարուցանէ. իսկ ելիւմտից պաշտօնը նոյն իսկ Պատրիարքարանի թոշակաւոր արկղակալին ալ կրնայ պատկանիլ որ անտեսապետին հրահանգով եւ անոր ակնարկութեանը ներքեւ կը գործէ:

Արդ պատուարժան պաշտօնակիցներէս ներում խնդրելով սա եւս կը համարձակիմ յայտնելու թէ այս առաջարկը՝ ոչ թէ վեր ի վերոյ տեսութեամբ, այլ Սահմանադրութեան սկիզբէն ի վեր ամեն պաշտամանց անարժանաբար մասնակցութեանս առթիւ տկար դիտողութեանս երկար փորձառութեամբ կը ներկայացընեմ պատկառելի ատենիս եւ կ'աղաչեմ որ աղէկ ու յուշիկ ուշադրութիւն շնորհելով, եթէ օգտակար համարի՝ այսպէս, կամ այլ ինչ եղանակաւ պաշտօնավարութիւնները պարզէ, որպէս զի սիրելի Ազգիս համարառութիւնը դիւրանայ եւ գործերը անսայթաք ընթանան՝ որում հանապազ ըղձալով եղած եմ

1875 Օգոստ. 1 Ընտրութիւն Եկեղեց. — Գաղափար. — Ընտրութիւն  
Ս. ԱՂԱՏԵԱՆ

Գ. Պէշիւթիւն Եկեղեց. — Գաղափար. — Ընտրութիւն

Մեծարոյ տեսարք

Կանխապէս ներումն կը խնդրեմ պատկառելի ժողովէդ իմ այն ամեն թերութեանցս համար՝ որք ակամայ պիտի սպրդին բերնէս համբակութեանս պատճառաւ. եւ թէ եւ քաջահմուտ եմ որ ձեր ականջները գրեթէ միշտ ճարտարահիւս ատենաբանութիւններ լսելու սովորած են, այլ սակայն ինձ անկարելի եղաւ այժմ լռել՝ յուսալով որ պատկառելի ժողովդ ներկայ առաջարկութեանցս ոգին եւ ոչ բացատրութեան կերպը ի նկատի առնելով՝ պիտի փութայ պատշաճն ու կարեւորը անօրինել:

Մեծարոյ տեւորք

Իմ խօսելիքս, ինչպէս որ Սրակարգը կը պահանջէ, ազգային Վարչութեան վերակազմութեանը նկատմամբ է. այս մասին շատ ատենաբաններ լաւ առաջարկութիւններ ըրին. իմ ըսելիքս ալ գրեթէ անոնց մէկ ուրիշ տեսակն է: Կը տեսնեմ որ Ազգիս եւ Ազգային ժողովոյս միակ փախաքն այն է որ ազգային Վարչութեան կազմութիւնն այն կերպիւ ընել որ ազգիս ամեն գործերն օրինաւոր եւ ընթացիկ վիճակ մ'ստանան: Վերաքննութեան յանձնաժողովը, նոյնպէս եւ ուրիշներ, չորս խորհուրդներն ի մի ձուլելով տեսուչ անուամբ երրորդ ժողով մը հաստատել կառավարկեն. սմանք ուրիշ ձեւ եւ այլն. բայց ես զանոնք մի առ մի թուելով ու անոնց ամենուն դէմ խօսելով չեմ ուղեր բնաւին զձեզ ձանձրացնել, ըստ որում այն առաջարկութիւններն իրենց մանրամասնութիւններովը արդէն քաջ գիտէք. բայց նախապէս սոսմիայն պիտի հարցընեմ որ, թէ եւ Սահմանադրութիւնն այնպէս կը արամադրէ, սակայն ինչ իրաւամբ նախնի օրէնսդիրք չորսը խորհուրդ եւ երեքը հռչակաբան անուաներ են, եւ այս վերջնոց երկուքն ալ տնտեսական խորհրդոյ ստորագրելով: Միթէ հոգաբարձութեանց պաշտօնը խորհրդոց պաշտօնէն ստորին է. միթէ կարեւորութիւններն միւսներէն պակաս է: Միանգամ Ելեւմտից հոգաբարձութեան պաշտօնը մտածեցէք. նա ազգիս գանձուց պաշտօնեայն է. եւ այս հոգաբարձութեանց ստորնագոյնը նկատուած շիւանդանոցի Հոգաբարձութեան պաշտօնին վերայ եւս մտածեցէք, կրնամ ըսել որ ասի խորհրդոց էն կարեւորը եւ իմաստութեամբ ու խոհականութեամբ կառավարելու արժանաւորագոյն պաշտօնն է, վասն զի այս պաշտօնին մէջ թէ Տնտեսական խորհրդոյ, թէ Ելեւմտից հոգաբարձութեան, թէ Ուսումնական խորհրդոյ եւ այլն վերաբերեալ մասեր կան. ըստ իս այս պաշտօնը քաղաքապետի մը պաշտօնն է: Ինչպէս որ քաղաքի մէջ կը գտնուի այր եւ կին, ծեր ու տղայ, խելացի ու անխելք, խօհեմ ու անառակ եւ այլն եւ այլն, նոյնպէս եւ այս յարկին կամ լաւ եւս է ըսել, այս թաղին մէջ ալ ասոնց ամենքն ալ գտնուելուն համար այս պաշտօնին կոչուելիք անձինք, կրնամ ըսել որ, բազմազէտ ըլլալու են. վասն որոյ ես այս երեք հոգաբարձութեանց խոր-

հուրդ անուանուող խիստ պատշաճ եւ արդարացի կը տեսնեմ: Գանք ընտրութեանց մասին ծագած դժուարութեանց:

Ազգային Վարչութեան պաշտօն վարող անձինք կարծեմ քաջ նկատած են այս Հոգաբարձութեանց ընտրութեանց ժամանակ կրած դժուարութիւններն, վասն զի թէ որ մէկը ուրիշ անգամ խորհրդոց մէկուն պաշտօնը վարած է, ալ այնուհետեւ զանի այս Հոգաբարձութեանց ընտրելի չեա կրնար ընել, որովհետեւ իւր նախապէս վարած պաշտօններէն ըստորնագոյն պաշտօն վարելը իրեն անպատուութիւն կը համարի, եւ այսպէս ըմբռնելն ալ կարծեմ անտեղի չէ. քանզի պաշտօնական ընթացքը պաշտօնավարութեան մէջ ստորինէն դէպ ի բարձրագոյնն յառաջանալ եւ ոչ բարձրագոյնէն յստորինն իջնել կը պահանջէ. անհայն է այն գլխաւոր մէկ պատճառը որ ընտրութեանց ժամանակ շատերուն կառավարկուի ու չեն ընդուներ: Կարծեմ կրցի ըստ բաւականին բացատրել այս իրաւաստական եւ անուանական անտեղութիւնները:

Գանք Վարչութեան Քաղաքական ժողովոյ ընտրութեան մասին:

Ես կը զարմանամ որ ինչու այս կազմութեանն համար ոմանք այլ ընդ այլոյ առաջարկութիւններ կրնեն, քանի որ ըստանդակ լուսաւորեալ աշխարհ, շատ վորձերէ ետք, արդի ընտրական դրութիւնն ընդուներ է եւ ըստ այնմ կրնթանայ. մինչեւ անգամ մեզ տիրապետող կառավարութիւնն ալ շատ տարիներէ ի վեր սոյն դրութիւնն ընդուներ ու կը գործադրէ այն է Գապինէ կամ Նախարարաց ժողովոյ կազմութեան կերպը, եւ մեր Ազգային Վարչութիւնն ալ կառավարութեան պաշտօնէից ճիշդ պաշտօնէական համակերպութիւնն ունի. այսինքն ունիմք Ընդհանուր ժողով մը որ ինքնակալի պաշտօն կը վարէ, որ է օրէնսդիր, Տեղինակ, դատաւոր եւ այլն, վերջապէս զԱղղը ներկայացնող. երկրորդ ունիմք փոխարքայ մը որ է Սրբազան Պատրիարք Հայրը. երրորդ ունիմք նախարարաց ժողով մը ընդ նախագահութեամբ Սրբազան Պատրիարքի որ է Կրօնական եւ Քաղաքական գործադիր խառն ժողովը. ունիմք դարձեալ մասնաւոր պաշտօնատարութիւններ, ինչպէս որ յայտնի է եւ այլն եւ այլն:

Ահա տեսէք որ մեզ տիրող կառավարու-

թեան պաշտօնակարգութեանը ճիշդ համանրմանն է: Բայց դժբաղդարար ամենէն կարեւոր կէտը չգիտեմ մեր ազգին մէջ ինչ դիտմամբ կամ պատճառաւ ցարդ չէ գործադրուած՝ այն է սոյն ժողովոյ անդամոց բարձրագոյն պաշտօնատարներէ չը բաշխանալը. եւ այս դրութեան օրինաւոր ու օգտաւէտ ըլլալն, ինչպէս որ պահ մ'առաջ յիշեցի. բոլոր աշխարհի կառավարութիւնք ճանչեր եւ ընդուներ են. մասնաւոր սորա օգուտը մեր ազգին նկատմամբ ալ աւելի է թէ բարոյական եւ թէ գործադրական մասամբ՝ զոր ստատ, այս ատենին մէջ պիտի բացատրեմ: Բայց նախ այս մասին ժողովոյս մէջ եղած առաջարկութեանց մի քանին յիշեմ:

Ոմանք կ'առաջարկեն Տեսուչ ժողով մ'ունենալ ուղղակի Ընդհանուր ժողովէն ընտրեալ եւ դարձեալ Ընդհանուր ժողովոյն պատասխանատու. ոմանք այս ժողովը Բարձրագոյն Գրան վաւերացմամբը հաստատենք, իսկ ոմանք այս ժողովը Վարչութեան իրաւասութեանը ներքեւ դնենք, եւ այլն, կ'ըսեն: Ես ասոնց ամենքն ալ ապարդիւն կը տեսնեմ. եւ եթէ այս պատկառելի ատենը կը հաճի ինձ միջոց տալու, այն ատեն անոնց ապարդիւնութիւնն հաստատող երկար բարակ ընդհանուր դիտողութիւնը կը պատրաստեմ ու ժողովոյս կը բերեմ: Բայց կարծեմ իմ նկատածս այլոց ժողովականաց կողմանէ եւս նկատուած է, որով այն առաջարկութեանց ամենքն ալ ուրոյն ուրոյն ընդգիմախօսներ ունեցան, վասն որոյ հարկ չ'եմ տեսներ այս մասին ժողովս զբաղեցնել:

Գանք այժմ առաջարկութեանցս: — Ես կ'առաջարկեմ որ նախ եւ յառաջ Հոգաբարձութեան մականունը վերցնելով, Քաղական խորհուրդներէն սկսեալ մինչեւ Կրօնական ու Քաղաքական ժողովները ամենքն ալ ԽՈՐՀՈՒՐԴ անուանին, որ կարծեմ արդէն խորհուրդ ու խորհուրդ մէջ բաւական ստուգաբանութեան մեծ տարբերութիւն չը կայ. ու ժողով անունը խորհուրդներէն տարբերելու համար միմիայն Ընդհանուր ժողովոյն վերապահել. զորօրինակ պէտք է ըսել. — Ազգային Կրօնական խորհուրդ. — Ազգային Վարչական խորհուրդ. — Տնտեսական խորհուրդ. — Ելեւմտից խորհուրդ. — Վանական խորհուրդ. — Կտակաց խորհուրդ. — Ուսումնական խորհուրդ. — Հիւանդանոցի Տեսչութեան խորհուրդ եւ Գատաստանական խորհուրդ առանց միանգամայն

զասոնք իրերաց իրաւասութեանը ենթարկելու. Կրօնական ու Վարչական խորհուրդներէն զատ միւս մնացած եօթն խորհուրդներուն համար Ազգային ժողովս նոյն պաշտօններուն յարմար եօթն անձինք կ'ընտրէ անկ եղած խորհրդոյն Ատենապետը անուանելով, եւ եօթն ուրիշ անձինք ալ ասոնց վրայ աւելցնելով, կը կազմուի տասն եւ չորս անգամէ բաղկացեալ Վարչական խորհուրդը՝ այսինքն Պաշտօնէից խորհուրդը. այսու՝ ժողովոյս մի անգամ քուէարկութեամբը թէ Վարչութեան անդամք եւ թէ բոլոր խորհուրդք ընտրուած պիտի ըլլան: Եւ այն ընտրեալ Ատենապետները, ըստ իւրեանց պաշտօնին բնութեանը, եռապատիկ թուով զեղչելի ընտրելեաց յարմար ցանկ մը կը պատրաստեն ու զայն Վարչական Խառն խորհուրդոյն կը բերեն. եւ Խառն խորհուրդն ալ անոնց մէջէն եւ թէ դրսէն իւրաքանչիւրն հինգ հինգ անգամէ բաղկացեալ յիշեալ խորհուրդները գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ՝ տարեկան համարառութեամբ ու իւր իրաւասութեանը ներքեւ: Ահա կը կազմուի Ազգային Վարչութիւնը՝ որ երկրիս կարգադրութեանը համաձայն ըլլալովն հանդերձ կ'ունենայ նաեւ նախորդ ընտրութեանց վրայ սա առաւելութիւնը կամ բարուճումը թէ, այս կերպիւ ընտրութեան մէջ քսանէն աւելի անձանց զեղչ մը կը գոյանայ, որ ասի բաւական դիւրութիւն կ'ընծայէ ընտրութեան. երկրորդ այն խորհուրդոց Ատենապետներն ընտրելեաց ցուցակը իրենք պատրաստելովն, թէ նոյն պաշտօնին յարմար անձեր կը պատրաստեն եւ թէ իրենց մէջ համակարծիք կը գտնուին միշտ, որ այս եւս գործ յառաջ տանելու ամենէն հարկաւոր կէտն է, երրորդ երեսփոխանաց ոմանց այն առաջարկութիւնները թէ խորհրդոց որոշումները Քաղաքական ժողովոյ գալով, միշտ բարձի թողի կ'ըլլան, եւ նոյն խորհուրդք առանց Վարչութեան որոշմանն ալ, արդէն չեն կարող բան մ'ընել, եւ այսպէս ազգը այն խորհուրդներէն սպասած բարեկարգութիւնները չէ կրցած եւ չը կրնար իսկ վայելել: Իրաւացի ըլլալով, անհայն կերպիւ այն անտեղութիւնն ալ կը բարձուի, վասն զի այն խորհրդոց Ատենապետները Վարչութեան խորհրդոյն անգամ գտնուելովն, (որ ըսել է, ամեն խորհուրդք Վարչութեան խորհրդոյն մէջ իրենց ներկայացուցիչները պիտի ունե-

նան), ապահովապէս կը կարծեմ որ ամեն խորհրդոց որոշումներն ալ Աարչութեան խորհրդէն անյապաղ կը գործադրուին: Գուցէ առարկուի թէ Աարչութեան եօթն անդամք, իրենց վրայ կրկին պաշտօն ունենալնուն պատճառաւ, չեն կարող շարաթն երկու կամ երեք օր միանգամայն դռնել. բայց ես այս օրինակ առարկութիւնները մեր ազգին համար անպատուութիւն կը համարիմ. վասն զի կարելի է կարծել որ հարիւր հազար անձէ բաղկացեալ ժողովրդեան մը մէջ չը կարենամք գտնել եօթն ազգասէր անձինք՝ որք յանձն առնուն շարաթը մէկ երկու օր իշահ ազգիս դռնել եւ այն ալ միայն երկու տարւոյ համար. քան լիցի, ես աներկմիտ եմ որ ոչ միայն եօթն այլ մի քանի եօթներ պիտի յաջողիմք գտնել: Անս կ'եզրակացնեմ իմ առաջարկութիւններս.

Ա. Թաղական խորհուրդներէն սկսեալ մինչեւ Քաղաքական ժողովը խորհուրդ անուանել իրենց ունեցած պաշտօնից անուամբը.

Բ. Խորհրդոց Ատենապետներն ալ Ազգային ժողովէս ընտրել, որով ընտրուած կըլլան նաեւ Աարչութեան խորհրդոյ անդամակցութեան.

Գ. Ամեն խորհրդոց Ատենապետներն իրենց խորհրդոյն վերաբերեալ անդամոցը համար ընտրելեաց ցանկը իրենք պատրաստելով Աարչութեան Խառն խորհրդոյ ներկայացնեն ընտրութիւն.

Դ. Խորհրդոց մէկ մէկու կապակցեալ խնդրոց համար ի հարկին նոյն խորհուրդները Աարչութեան հրամանաւ եւ Պատրիարքական Փոխանորդ Հօր նախագահութեամբ ի Խառն ժողով գումարել նոյն Խառն խնդրոց կարգադրութեանն համար:

**Մեծարոյ Տեսրք**

Չը կարծէք որ իմ այս առաջարկութիւններովս իբրեւ հեղինակ կամ օրէնսդիր կը ներկայանամ այսօր պատկառելի ժողովոյդ. քան լիցի. այլ, ինչպէս կանխաւ իմ թերութիւն ու անկարողութիւնս խոստովանեցայ, լոկ իբրեւ պարզ առաջարկութիւն կը ներկայացնեմ. այս ազգասէր եւ պատկառելի ժողովը անոնցմէ ծաղկաքաղ ընելով, իմ առաջարկածներէս աւելի լաւագոյնը կրնայ իմաստասիրել. մանաւանդ ամենուս իղձն այն է որ Աարչութեան վերակազմութիւնն այնպէս լաւ կերպիւ տնօ-

րինել, որ, մինչեւ անգամ, թէ եւ տգէտ անձինք ալ գանուին այս պաշտօններուն գըլուխը, դարձեալ ազգային գործերը լաւ կերպիւ տնօրինուին ու ընթացիկ վիճակ մ'ստանան: Չեմ մտնար սա եւս յաւելուլ, որ անուրանալի ճշմարտութիւն է թէ ժամանակ ժամանակ ազգային Աարչութեան գըլուխը այնպիսի իմաստուն անձինք գտնուած են, որ քիչ ժամանակի մէջ շատ գործեր տեսած ու լաւ կերպիւ կառավարած են. բայց ասոնք բացառութիւններ են. կարելի է որ ամեն ատեն բարեբաղդութիւն չ'ունենանք այնպիսի անձեր Աարչութեան գըլուխը տեսնելու:

1 Յոգոստոս 1875 Ա. Գ. ՊԵՏԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Խօսք մ'ունիմ Պէշիրեան էֆէնտիի ատենադանութեան վրայ:

Ինչն ազատ է, ամեն ոք կրնայ խօսիլ իւր տեսութեան կէտովը, բայց պատշաճից օրէնքը կը պահանջէ որ քաջ կշռէ գաղափարն ու բառը, մանաւանդ երբ հեռուէ հեռու աշխարհավարական ակնարկ մը գտնուի խօսքին մէջ. նոյնպէս երբ օրինակ մը բերել պէտք լինի, քաջ կշռելու է բաղդատուած կէտերը, որպէս զի դիտում մը չկասկածուի բնաւ ոչ միոյն չափազանց գովութեան եւ ոչ միւսոյն անպատուութեան:

ՊԵՏԻՐԵԱՆ Ա. ԷՖ.— Ո՞րն է արդեօք այդ բառը. երբ բան մը հաստատելու համար օրինակ մը բերել հարկ ըլլայ, Աստուծոյ ալ կըրնանք օրինակ բերել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ես ըսել չեմ ուզեր երբէք որ դուք դիտում ունիք, այլ պատշաճից օրէնքը կը յիշեցնեմ միայն: Գուք ազատօրէն խօսեցաք, ես ալ իբր Ատենապետ իմ պարտքս կը կատարեմ. ասկէ աւելի բացատրութեան կարօտութիւն չ'ունիք ոչ դուք, ոչ ժողովը եւ ոչ ես:

Ե. Քաղաքական ժողովոյ անդամոց ընտրութիւնը

**Առաջարկութիւն**

Քաղաքական ժողովոյ պաշտօնին, բնութեան, ընտրութեան եւ Բ. Գունէն վաւերացման եղանակին չհպիլ, այլ Տեսուչ խորհուրդներն ի մի ձուլել նուազ թուով եւ Քաղաքական ժողովոյ ընտրութեամբ եւ հատուածներ-

րու բաժանել, սակայն միշտ պատասխանատու կարգելով զայն Քաղաքական ժողովին, ինչպէս են հիմա:

ՍԱՐԳԻՍ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ Գ. ՓԱՓԱՋԵԱՆ  
Մ. ԷՍՏԵԱՆ Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ  
Ս. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԱՍՓԱ Է. ԻԿԻՏՊԵՏԵԱՆ

**Զ. Մարտի 1-ին Էֆէնտի Խորհուրդի Կարգադրութիւնը**

Վսեմաշուք Ատենապետ փաշա ազգային ընդհանուր ժողովոյ

Ազգային ժողովոյ վիճարանութեանը ենթարկուած վարչական կազմակերպութեան խրնդիրը գրեթէ Սահմանադրութեան վերաքննութեան էն գլխաւոր կէտերէն մին է, եւ կարժէ որ հասուն խորհրդածութեամբ այնպիսի կազմակերպութիւն մը տրուի, որ այնչափ տարիներէ ի վեր խնդիր եղած, Պատրիարքներ տապալած, Ազգին ակնկալութիւնները ի դերեւ հանած, որ ոչ միայն այսչափ տարուան ճգնաց այլ եւ Ազգին իսկական պիտոյիցը համապատասխանէ, որ Ազգային ժողովոյ մէջ տիրած այս մասին զանազան կարծեաց կուսակցութիւնները միացնէ, որով այլ եւս Աարչութիւնը գոնէ իր կազմակերպութեանը մասին, իր հակակիր մասը չունենայ:

Արդ՝ նկատելով որ ներկայ Աարչութեան Քաղաքական եւ Կրօնական ժողովոց սահմանադրապէս յատկացեալ պաշտօնները, ըստ բաւականին չի կրնալ կատարելնուն պատճառը, ոչ նոյն ժողովոց զանազալ շարժումը, ոչ այնչափ Պատրիարքը եւ Ազգային ժողովը է, որչափ որ իրենց կազմակերպութենէն եւ պաշտօնին բնութենէն է, վասն զի այս կրկին ժողովները այնպիսի դիրք մ'առած են, որ ամեն տեսակ խնդիր, թէ անհատական, թէ թաղական, թէ գաւառական եւ թէ վարչական, վերջապէս թէ հանրական խնդիր ըլլայ այն եւ թէ մասնական, հարկադրուած է անոնցմով անխտիր զբաղելու, առանց ուշ գնելու. Ազգին հանրական եւ էական պիտոյիցը առջեւ անոնց ինչ աստիճանի կարեւորութիւն ունենալնուն, ինչու որ իրենցմէ զատ խնդրոյն կարեւորութեանը համեմատ ժողով չիկայ, մարմին չիկայ յանձնելու, որպէս զի ինքն ալ կարող ըլլայ, ժամանակ ունենայ, ճիշդ Սահմանադրութեան իրեն տուած պաշտօնը կատարելով, իր բարձր գիրքը միանգամայն արժանիքը պահելով Ազգը

գոհացնելու, մէկ խօսքով չէ կարողացած մինչեւ ցայսօր եւ ոչ մէկ վարչութիւն, որ Ազգին ապագան պատրաստող գործերով պարապած ըլլայ: ( Խիստ քիչ բացառութեամբ ) բոլորն ալ սպասողական դրութեան հետեւած, օրուան ծնած եւ մասնաւոր խնդիրներով իրենց արձանագրութիւնները լեցուցած են. ուրիմն անխուսափելի պարտքն է Ազգային ժողովոյն ներկայ վարչական կազմակերպութիւնը փոփոխելու. եւ եթէ առ այժմ էն օգտակար ձեւը տակաւին չենք կրնար տալ ( որ ներկայ Քաղաքական եւ Կրօնական ժողովները երկերկու մասերու բաժնուած պահելով, տեսուչ խորհրդոց եւ հոգաբարձութեանց գործերը յատուկ պաշտօնեաներու (երեք կամ չորս) յանձնելու վերայ կը կայանայ ըստ մեզ ) գոնէ հետեւեալ կերպով վարչութիւնը կազմել բարեհաճիլը կը խրնդրեմ պատկառելի Ազգային ժողովէն, որ քիչ շատ Վերաքննիչ յանձնաժողովոյ եւ այլոց կարծեաց ալ կը համաձայնի:

1. « Կրօնական ժողովոյ անդամոց թիւը « 14 պահելով երկու մասի բաժնել 7 ական անձինք. առաջին մասը Ազգին կրօնական ընդհանուր եւ ապագային պատրաստութեանը « վերաբերեալ գործոց համար. երկրորդ մասը « կրօնական բոլոր մասնաւոր գործոց համար:

2. « Քաղաքական ժողովոյ անդամոց թիւը « 28 ընելով չորս մասի բաժնուած ըլլայ 7 ական անձինք. առաջին մասը Ազգին քաղաքական ընդհանուր գործոցը զբաղելով օրինակ « նաց գործադրութեան եւ ընդհանրապէս բարեկարգական եւ յատկապէս միջոցներ « ձեռք առնէ. երկրորդ մասը Ազգին քաղաքական բոլոր մասնաւոր գործոցը յատկանայ. « երրորդ մասը անտեսական ( ներկայ Տեսուչ « սական, Ելմտական եւ Կտակաց հոգաբարձութեան պաշտօնները ) գործոցը. չորրորդ « մասը Ազգին ուսումնական ( ներկայ Ուսումնական, Վանօրէից եւ Կտակաց հոգաբարձութեան պաշտօնները ) որ է դաստիարակութեան գործոցը յատկանայ:

« Թէպէտ կրնայ ( եթէ դժուարութիւն մը « չիկայ ) կրօնական ժողովոյ պէս Քաղաքական « ժողովը ալ 14 անդամէ բաղկանալ երկու մասի բաժնուած, եւ 14 անդամէ ալ տեսուչ « ժողով մը դարձեալ երկու մասի բաժնուած « 7ական անձինք, մէկը Ուսումնական եւ միւսը « Տեսուչական գործոց համար, ամենքն ալ

« Ազգային ժողովէն ընտրեալ, նախագահ ու  
 « նենալով իրենց Պատրիարքը, եւ այն ատեն  
 « վարչութիւնը երեք հաւասարութիւ ժողով  
 « երկերկու մասերու բաժնուած կըլլայ, կամ  
 « վեց ժողով պատասխանատու Ընդհանուր ժո-  
 « ղովոյ, իսկ կրօնական եւ քաղաքական խա-  
 « ռն գործերը իրենց պատկանեալ մասերուն  
 « միացմամբ կ'որոշուի » :

Արդ՝ տեսնա՞ք իմ, յայտնի է որ մենք այս  
 ձեւին հիմ գրած ենք բոլոր ազգային խնդրոց  
 երկու մասի բաժանումը. մէկը ընդհանուր խըն-  
 դիրք, որ միշտ կան եւ պիտի ըլլան, եւ որ այ-  
 սօր ըստ արժանւոյն չեն հոգացուիր. իսկ միւ-  
 սը մասնաւոր խնդիրք, որ նոյնպէս կան եւ ա-  
 ւելի պիտի ըլլան, քանի որ այս երկու տեսակ  
 խնդիրք, մէկ մարմնոյ մը յանձնուելով ոչ մէ-  
 կը եւ ոչ միւսը պիտի կարենայ իրեն արժան  
 եղած լուծումը ընդունիլ ժամանակին : Ուստի  
 դատած ենք այս երկու տեսակ խնդիրները ի-  
 բարմէ, մեր առաջարկած դրութեամբը, եւ  
 ընդհանուր գործոց համար զատ մարմին մը յատ-  
 կացուցած ենք թէ քաղաքականին եւ թէ կը-  
 րօնականին համար, ինչպէս մասնաւոր գործոց  
 համար ալ զատ. այս կերպով խնդիրք իրենց  
 որոշ դիւանները կունենան եւ ժողովոց աշխա-  
 տութիւնն ալ ապարդիւն չմնար :

1 Օգոստ. 1875 Մնամ խորին յարգանքօք  
 Յ. Ս. ՄԱՋԼՄԵԱՆ

Է. ՃՊՏՊՏՊՏ ԷՖԷՆՊԷԷ - - - - -

**Մեծապատիւ տեսնա՞ք**

Ազգային վարչութիւնը պարզ եւ արդիւ-  
 նաւոր կերպով վերակազմելու համար պատկա-  
 ռելի ժողովոյդ կամքը նկատելով, այս մասին  
 ունեցած դիտողութեանս հետ երրորդական մէկ  
 առաջարկութիւնն ալ որ թէեւ անընդունելի  
 դատուի՝ պարտք կ'ամարիմ անգամ մը ներկա-  
 յացնելով ազգին ուշադրութեանը յանձնել :

Արդարեւ կեդրոնական մարմնոյ խորհուրդ-  
 ները եւ հոգաբարձութիւնները միացնելով տե-  
 սուչ խորհուրդ մը կազմել եւ ներքին գործ-  
 քերը արտաքինէն որոշելով անոր յանձնելը,  
 արդի վարչական բաժանեալ վիճակէն որչափ  
 աւելի պարզ եւ օգտակար ըլլալը չի կրնար  
 հերքուիլ, բայց այս կերպով օրինաւոր վար-  
 չութիւն մը կազմուած ըլլալու եւ սպասուած  
 արդիւնքը տեսնելու բազմը պիտի կրնամք ու-

նենալ. այս է ահա ուշադրութեան արժանի  
 կէտը :

Վարչութեան սոյն առաջարկեալ կերպին  
 վերածուելը որչափ որ առաջինէն աւելի օգ-  
 տակար ըլլայ, սակայն ազգային ներքին գործ-  
 քերուն բոլորն ալ առաջուանէ որոշել եւ սահ-  
 մանելը անկարելի ըլլալով, շատ հաւանական  
 է որ ապագային մէջ ներքին եւ արտաքին  
 հանգամանք ունեցող անանկ խնդիրներ պա-  
 տահին, որկէց վարչութեան մէջ իրաւասու-  
 թեան խնդիրներ եւ անհամաձայնութիւններ  
 պատահելով՝ վարչութիւնը ի դուր զբաղեցնեն  
 որով ազգային գործքերը դարձեալ յապաղե-  
 լուն պատճառ ըլլան :

Եթէ ազգին դիրքին եւ վիճակին յարմար  
 վարչութիւն մը կազմելու կենսական խնդիրք  
 այս անգամ վերջնական կերպիւ լուծել եւ ու-  
 թոշել է ժողովոյդ կամքը եւ նպատակը, տասն  
 եւ հինգ տարուան փորձառութենէ համողուե-  
 լով պէտք է թոշակաւոր պաշտօնէութիւն մը  
 հաստատելու դրութիւնը առանց վարանելու  
 ընդունիլ, եւ Սրբազան Պատրիարք Հօր նա-  
 խագահութեան եւ կրօնական եւ Քաղաքական  
 ժողովոց անմիջական հսկողութեան ներքեւ  
 պաշտօնէութիւն մը ընտրելով, Տեստեսական ու  
 Ուսումնական եւ Ելեւմտական խորհրդոց,  
 Վանօրէից, Կտակաց եւ Հիւանդանոցի հոգա-  
 բարձութեանց պաշտօնները անոր յանձնե-  
 ալ այնուհետեւ ներքին եւ արտաքին գործոց  
 բաժանման, սահմանադրական վերաքննու-  
 թեան կամ բարեփոխութեան, իրաւասութեան  
 եւ յարաբերութեան անսպառ խնդիրներ, Վար-  
 չութեան անդամոց յաճախ հրաժարման եւ  
 ընտրութեան դժուարութիւններն ապարդիւն  
 վիճաբանութիւններ միանգամ ընդ միշտ վեր-  
 ջանալով, ազգային գործքերը շատ եւ շատ  
 աւելի կ'կարգաւորուի, եւ զգալի յառաջդի-  
 մութիւն կ'տեսնուի, մանաւանդ ազգային  
 տրոց որոշումը եւ հաւաքումը կ'փութանայ :

Ահա այն ժամանակ սահմանադրական օ-  
 րէնքը այնչափ կ'պարզուի որ ամէն ազգային  
 անհատ կրնայ ըմբռնել թէ ինչ է ազգային օ-  
 րինաց տրամադրութիւնքը անհատական եւ  
 վարչական մասին, եւ Ազգին ու Վարչու-  
 թեան փոխադարձ պարտուց եւ իրաւանց վը-  
 ճարումը կրնայ ապահովուիլ :

Տեսնա՞ք, երբ մէկ կողմէ սահմանադրական  
 օրէնքով վարուիլ կ'փափաքիմք, եւ միւս կող-

մէ հին դրութենէ այն է ձրի պաշտօնավարութե-  
 նէ չեմք ուղեր շեղիլ, ասի բացարձակապէս հա-  
 կասական դրութեամբ վարուիլ է եւ պարտուց  
 եւ իրաւանց անհաւասարութիւն, որովհետեւ  
 սահմանադրական օրինօք երբ ամէն անհատ իր  
 պարտականութիւնը կատարել կ'հրաւիրուի եւ  
 ազգային տուրք կ'պահանջուի, մինչեւ բոնու-  
 թեամբ եւ խստութեամբ վարուելու փորձեր  
 կըլլան եւ միւս կողմանէ ազգային Վարչու-  
 թիւնը մինակ բարոյական պարտականութեան  
 կ'ենթարկուի, ասանկ վարչութեան մը պար-  
 տազանցութենէն յառաջ գալիք Ազգին բարո-  
 յական եւ նիւթական միտքը մի պիտի տուժէ,  
 երբ ազգային իշխանութիւնը սահմանադրական  
 օրինաց ներքեւ կ'դրուի, եւ երբ ազգէն օրի-  
 նաւոր տուրք կ'պահանջուի, ցուցէք ուրեմն  
 Պատրիարքութեան հետ գործադիր եւ մնայուն  
 մարմին մը, որ ամէն ատեն Ազգին գործքերը  
 կատարելով, եւ հաւաքելի տրոց եւ ըլլալիք  
 ծախուցը հսկելով, ինքն ալ փոխարէն ազգէն  
 վարձատրուի, եւ իւր պարտազանցութեան  
 միտքը իր անձնական միտքով տուժէ, այս է  
 սահմանադրական օրինաց պահանջումը եւ այս  
 է միակ օգտակար վարչութիւն մը կազմելու  
 կերպը :

Իսկ եթէ առարկուի թէ Ազգին ներկայ  
 վիճակը ծախուց առաւելութեան չի ներեր, ես  
 կ'կարծեմ որ այնչափ նոր ծախուց առաւելու-  
 թեան պետք չէ համարուի միայն թէ ազգա-  
 յին կամք պէտք է որնոր մեծ զօրութիւն եւ  
 նշանակութիւն ունի եւ որուն ներկայացուցի-  
 չը կ'գտնուիք :

Եթէ Վարչութեան ներկայ ծախքէն մաս  
 մը յատկացուի եւ մաս մ'ալ Ազգային ծախուց  
 հաշուեկշռոյն վրայ յաւելում մը ըլլալ որոշուի,  
 կրնայ առ այժմ երկու եկեղեցական կարգէ  
 փոփոխելի եւ վերընտրելի եւ չորս աշխարհա-  
 կան կարգէ թոշակաւոր եւ անփոփոխ անդամ-  
 ներէ բաղկացեալ պաշտօնէութիւն մը կազմը-  
 ուիլ, որոնք միմիայն Ազգին գործը զբաղելով  
 եւ ամէն օր աշխատելով ազգին ներկայն բար-  
 ւոքելու եւ փառաւոր ապագայ մը պատ-  
 բաստելու կարող ըլլան, առանց այս դրու-  
 թեան վարչական ինչ կերպ որ ընդուն-  
 ուի, Ազգին վիճակը յուսացուածին չայի  
 բարւոքելը երբէք չի յուսացուիր, միայն թէ  
 լաւագոյն կերպի մը ընտրութեամբ շատանալ  
 կ'նշանակէ եւ ոչ թէ կատարեալ օրէնքի մը

հետեւիլ. թէ որ պատճառը դարձեալ ժամա-  
 նակը դեռ չի հասած ըլլալ կ'դատուի այն ալ  
 պատկանելի ժողովոյդ բարձր կամաց յանձնը-  
 ուած ըլլալով, կ'սպասեմք ապագային յուսով :

1 Օգոստոս 1875  
 Կ. Պօլիս

— Քանի մը կողմէ ժողովին դադարը կը  
 խնդրեն — :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովը այս գրաւոր  
 առաջարկութիւններն լսեց, եւ հիմա երեք ա-  
 տենաբան ունի մտիկ ընելու, որոնք իրենց ա-  
 նուններն արձանագրել տուած են : Առաջինը  
 Պասմաճեան էֆէնտիին է իրաւ, բայց որով-  
 հետեւ երկու անգամ զինքը արդէն լսելու  
 պատիւն ունեցանք, ուստի խօսքը իւր յաջոր-  
 դին՝ Շահպազ էֆէնտիի կուտանք նախ, թե-  
 բեւս անոր առաջարկելիքն Պասմաճեան էֆէն-  
 տիին առաջարկութեանն հակառակ ըլլայ. եւ  
 յետոյ Պասմաճեան էֆէնտի կ'առնու խօսքը :

ՇԱՀՊԱԶ Ե. ԷՖ. — Միայն թէ կը փափաքիմ  
 որ ժողովը ինձ բացառութիւն մ'ընէ այսօր  
 տաճկերէն խօսելու, վասն զի աւելի դիւրու-  
 թեամբ կը բացատրեմ այս կերպով :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովը դադար ունի  
 այժմ, եւ ի վերջէ այդ ձեր առաջարկութեան  
 վրայ ժողովին կամքը կը հարցնեմ :

Այս պահուս ժողովը քառօրդ ժամու չափ  
 դադար կառնու, եւ յետոյ ատենը բացուելով  
 կը շարունակուի կրկին :

ՊԱՄՄԱՃԵԱՆ Ս. ԷՖ. — Բաւական ատենէ  
 ի վեր երեսփոխանական պաշտօն կը վարեմ,  
 եւ երբէք չ'եմ տեսեր որ խօսք առնող ատե-  
 նաբանի մը առաջնութեան իրաւունքը իրմէ  
 զլացուի : Թէեւ սիրելի է ինձ առաջնութեան  
 իրաւունքս իմ պաշտօնակցիս՝ Շահպազ էֆէն-  
 տիի թողուլ, բայց վասն զի Գիւանին կողմէ  
 այս մասին բռնաբարում մ'է որ տեղի կ'ունե-  
 նայ, կուզեմ որ բացատրէք ինձ թէ ո՞ր օրի-  
 նաց եւ ինչ կանոնի համեմատ կը շարժիք այս  
 պարագային մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ, բացատ-  
 րեմ :

Գիւանը խօսք խնդրող երեսփոխանաց ա-  
 նուններն կարգաւ կը նշանակէ. բայց որովհե-

տեւ մեր ներքին կանոնադիրը կը պահանջէ որ ատենաբանք վիճաբանութեանց մէջ փոխասաց յաջորդութեամբ խօսին թեր ու դէմ, կը հետեւի ուրեմն այս կանոնէն որ Գիւանը պարտաւոր է ատենաբաններն երկու կարգի բաժնել, եւ առաջնութեան կարգը փոխասաց յաջորդութեան մէջ պահելով խօսք տալ փոփոխակի ի նպաստ եւ աննպաստ խօսողաց: Այս կարգն է որ Գիւանը կուզէ պահել: Պատմաճեան էֆէնտի եւ դուք որ ժողովը լուսաւորելու համար կը խօսիք անշուշտ, եւ չէ թէ ատենաբանելու հաճոյքի մը համար, պիտի համակերպիք ի հարկէ ժողովոյ ընթացքին, սակաւ ինչ համբերութիւն յանձն առնելով: Զգիտենք իրաւ թէ Շահպազ էֆէնտի ինչ պիտի խօսի, բայց ժողովը ըստ որում երկու անգամ լսած է ձեզ արդէն, Գիւանը խօսքը Շահպազ էֆէնտի կուտայ, որ թերեւս ձեզ հակառակ կարծիք պիտի յայտնէ. եւ զայս ընելով Գիւանը կապտած չըլլար ձեռնէ ձեր խօսելու իրաւունքը: Իսկ եթէ բոլորովին արգելուր զձեզ խօսելէ, այն ատեն անշուշտ իրաւունք կունենայիք եւ դուք բողոքելու:

ՊԱՍՄԱՃԵԱՆ Ս. ԷՖ.— Առանց այդ բացատրութիւնն գոհացուցիչ գտնելու՝ առաջնութեան իրաւունքս Շահպազ էֆէնտի կը թողում:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Ի նպաստ եւ ընդդէմ ատենաբանողներն ալ իրենց առաջնութեան կարգն ունենալու են:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ասոնք մանր միջադէպներ են, Օգտէն էֆէնտի որ մեզ կը բարեցունեն: Պատմաճեան էֆէնտի հարցում մը ուղղեց եւ իւր բացատրութիւնն ստացաւ. եթէ գոհ չէ, կրնայ խնդիր մ'ընել զայն կամ բողոք բառնալ. եւ դուք ալ եթէ ուղղէք, կրնաք իրեն ձայնակցել: Ժողովը այն ժամանակ խնդիրը կը լուծէ: Հիմա խօսքը ձերն է, Շահպազ էֆէնտի, բայց դուք կարծեմ խնդիր բրիք ժողովին որ թող տայ ձեզ տաճկերէն լեզուով խօսելու:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ.— Սահմանադրութեան վերաբնութեան խնդրոյն վրայ կուզեմ խօսիլ, եւ զաղափարս լաւ բացատրելու համար թոյլտուութիւն կը խնդրեմ, այսօր միայն քառորդի մը չափ տաճկերէն լեզուով խօսելու: Նախ վասն զի զիս ընտրողներն իմ կարծիքներուս համար ընտրած են, երկրորդ վասն զի տաճկերէնը իբր երկրին լեզուն՝ մեզի համար տեսակ մը երկրորդական մայրենի լեզու դարձած

է: Ուստի չեմ կարծեր որ Գիւանը մերժէ առաջարկութիւնս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ես չեմ կարող յինչքենէ թոյլտուութիւն տալ ձեզ. վասն զի նախ իմ կարծեացս դէմ է, եւ թերեւս երեսփոխաններն ալ հաւան չգտնուին ձեր առաջարկութեան, ուստի ստիպուած եմ ժողովին կարծիքը հասկնալ:

ԱԼԵՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ.— Պոյսոյ մէջ արդէն մայրենի լեզուն խօսելու շատ նախանձախնդրութիւն չեմ տեսներ, եւ միայն Ազգային ժողովին մէջ ազգային լեզուն կը գործածուի եւ կը պահպանուի: Ուստի իմ մասիս Շահպազ էֆէնտի առաջարկութեան չեմ կըրնար հաւանիլ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Թէեւ այսօրուան համար միայն ատենաբան էֆէնտի բացառիկ շնորհ մը կը խնդրէ, սակայն այս շնորհը իւր բոլոր ատենաբանութեանց պիտի վերաբերի, վասն զի յայտնի է որ այսօր հայերէն չ'կրնար խօսողը, վաղն ալ չ'պիտի կրնայ խօսիլ, ուստի Շահպազ էֆէնտի, լաւ կընէք որ ի գիր առնուք Ձեր խօսքը, զոր Ձեր պաշտօնակիցներէն մին ալ թարգմանելով կարգայ զայն:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ.— Ձեր խօսքը առ Գիւանն պէտք է ուղղէք եւ չէ թէ ինձ, Ես միայն այսօրուան համար տաճկերէն խօսելու թոյլտուութիւն խնդրեցի, վասն զի օրէնսդրական խնդրոյ մը վրայ է խօսքը, եւ այնպիսի բառեր հարկ պիտի ըլլայ գործածել, որոյ հայերէնը չ'գիտնալով թերեւս՝ սխալ կերպով գաղափարս բացատրեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Արդ՝ Շահպազ էֆէնտի, յանուն ժողովոյ կը յայտարարեմ Ձեզ որ այս կարծ բանակցութեանց մէջ այնքան լաւ կերպով խօսեցաք եւ բացատրեցիք Ձեր միտքը, որ կը պարտաւորէք զձեզ պահանջել որ այդ լեզուով ընէք Ձեր ատենաբանութիւնը:

Այս յայտարարութեան վրայ Ատենաբանը կը հաւանի հայերէն լեզուով ատենախօսելու եւ բեմը կ'ելնէ:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ.— Տեսնաք, ժողովը այսօր ազգին էն կենսական մէկ խնդրովը կ'ըբաղի, որ այսքան շատ ճիւղեր արձակեց, եւ բազմապատկուեցաւ: Խնդիրը Ազգային վարչութեան կազմակերպութեան վրայ է, եւ Ազգային վարչութիւնն ըսելով կ'իմանանք այն մար-

մինը՝ որոյ պաշտօնն է մեր ներքին, արտաքին, կրօնական ու աշխարհական գործերը՝ վերջապէս ինչ որ ազգային է, տնօրինել: Կրօնն թէ վարչութիւնը իւր արդի գրութեամբ չ'բաւէր այս գործերը տնօրինելու, եւ ժողովները բազմապատկել, գրութիւնը փոխել կ'առաջարկեն: Ըստ իս սխալ է այս կարծիքը: Վարչութիւնը Ազգին գործերը տնօրինելու բաւական կրնայ ըլլալ, բայց միայն ազգային հանրական գործերը թողելու է անոր: Հիմա բոլորովին մասնաւոր, անհատական խնդիրներով պաշարուած է, եւ այս է պատճառ որ կը տաքնապի եւ ժամանակ չ'ունենար հանրական գործերուն զբաղելու համար: Զոր օրինակ, գաւառէ մը տաս, քսան ստորագրութեամբ հանրապի մը կը դրկեն, եւ կը բողոքեն որ այս ինչ անուն անառակը, հարստահարիչը սաշտի տեղ գրաւեր եւ վրան լաւ ընել տուեր է: Դատական խնդիր մ'է այս, եւ ինչ կրնէ վարչութիւնը, Բ. Գրան թագրի կ'ուղղէ՝ եղելութիւնը պատմելով, եւ զրկելոց համար իրաւունք կը խնդրէ: Սակայն վարչութիւնը Բ. Գրան առջեւ կրնայ ըսել ինք հաստատապէս թէ յանցաւորը այս ինչ կամ այն մարդն է, ոչ, թէ՛ իրաւունքն ասոր կամ անորն է, ոչ, վասն զի դատաստան եղած չէ: Ուստի Բ. Գրանը գործը քննութեան ու դատաստանի պիտի յանձնէ, եւ ասոր արդիւնքը պիտի դիտէ գործագրութիւն մ'ընելու համար: Այսպէս են գործերուն շատը: Գաւառներէն՝ անհատական, անձնական խնդիրներ հեռագրով մը, հանրագրով մը հոս կ'ուղարկեն, եւ իրենք կ'ապասեն անդին որ վարչութիւնը դարման տանի, կ'ստիպեն հեռագիրներ տեղալով որ դարման մը փութացնէ: Բայց վարչութիւնը ոչ պարտաւոր է, եւ ոչ ալ կրնայ անոնց տեղը ինք դատի ելնել, ուստի ինչ դարման կարող է տանիլ, իւր ընելիքը ուրիշ բան չ'է, եթէ ոչ՝ թարգման կանգնիլ Բ. Գրան առջեւ, եւ այս զբաղումը՝ վարչութեան գործերը կը բազմապատկէ, եւ ժամանակ չ'մնար բուն ազգային հանրական խնդիրներով զբաղելու: Վերջապէս սա ըսել կուզեմ որ մեր վարչական արդի կազմակերպութիւնը չէ բնաւ արգելք գործոց արագ տնօրէնութեան, այլ ազգային Պատրիարքարանի չ'վերաբերեալ գործերն են, որոնք կուգան վարչութեան վրայ՝ կը ծանրանան, եւ զայն կարգելուն գործելէ: Ուստի ես

կ'առաջարկեմ որ գաւառներէն եկած այն խոնդիրներէն զատ՝ որոնք ուղղակի վարժարանաց, եւ եկեղեցեաց եւ վերջապէս Ազգին ընդհանրութեան կը վերաբերին, անհատական խոնդիրներ երբ ներհայանան, վարչութեան կողմէ պատասխան տրուի որ տեղակին կ'առաջարկեան դիմեն եւ դատ վարեն, եւ յետոյ եթէ պէտք ըլլայ Պատրիարքարանի միջնորդութիւնը՝ այն ատեն դիմեն հոս: Եթէ այս ընթացքը չ'բռնէ վարչութիւնը, թէ իրեն համար մեծ զբաղում մը պիտի պատճառէ, եւ թէ միայն իւր խնդիրը տէրութեան օրինաց չ'համաձայնելուն արդիւնք մը յառաջ չ'պիտի բերէ: Ո՞վ կրնայ պնդել թէ Պատրիարքարանի թագրիներուն համեմատ անփշապէս այս տեսակ խնդիրներն կը վճուուին, եւ կը ըմբռնան: Տրապիզոնի մէջ 1000 արտավար տեղ, մարդ մը գրաւեր է, եւ իւր վրայ թափու ընել տուեր է, վանքի մը 1300 հատ ոչխարը գողցեր են. եւ Պատրիարքարանէն թագրի գողցեր է. ո՞վ կրնայ ըսել թէ այսպիսի թագրի մը վրայ իսկոյն հրամայած ըլլայ Բ. Գրանը որ գետինը տիրոջը, ոչխարներն վանքին դարձնեն:

Պէտք է որ սեպականութեան տէրը, վանահայրը բողոքեն տեղական իշխանութեան, ուր է խնդիրը, ուր են յափշտակիչները. եւ եթէ իրենց իրաւունքը հաստատուի, իշխանութիւնը կը պատժէ հարստահարող աւազակը, եւ անոնց յափշտակած բաները սեպականութեան տէրերուն կը դարձնէ: Եթէ չ'պաշտպանուի անոնց իրաւունքը, այն ատեն Ազգը իբրեւ միջնորդ եւ թարգման կը միջամտէ, բայց չէ թէ դատը ինք ըստանձնելով: Վարչութեան անդամներն որ հոս ներկայ են, կրնան վկայել թէ իրենց դիւանները լի են այս տեսակ խոնդիրներով, որոնք պէտք է գատուին բուն ազգային հանրական խնդիրներէն:

Այս դիւրութիւնը ձեռք բերելու համար կ'առաջարկեմ որ ինչպէս Ազգային ժողովը նախաքննիչ դիւաններ ունի, նոյնպէս ունենայ ազգային վարչութիւնն ալ ինչպէս Տէֆէլէ (գատող) անունով ժողով մը, որ եկած խոնդիրները կը դատէ, Պատրիարքարանի վերաբերեալները վարչութեան կը յանձնէ, գաւառներուն վերաբերեալներն իրենց տեղերը կը դրկէ, հեռագրով պատասխան տալով որ իրենք հոն բողոքեն տեղական կ'առաջարկու-

Թեան առջեւ, եւ թէ ի հարկին Պատրիարքարանն ալ կ'օգնէ իրենց, մինչդեռ հիմա խնդիրը Օրակարգին մէջ պիտի սպասէ իւր կարգին, ժամանակը պիտի սահի արդիւնք մը յատուց չ'գալով, եւ դաւաճանացոյ կողմէ անվերջանալի բողոքներ պիտի լինին թէ՛ Պատրիարքարանը գործերը չ'նայիր եւ այլն: Տաճկաստանի մէջ երկուք ու կէս միլիոն շայ կը հանուեն, եթէ ասոնց ամենուն անձնական գործերը կեդրոնական Վարչութիւնը ստանձնէ, կարելի է միթէ որ շարաթը միանգամ, քանի մը ժամ գումարուող ժողով մը զանոնք կարգադրէ:

Անցնինք ուրիշ խնդրոյ մը: Մեր ազգային Վարչութիւնը 28 հոգիէ բաղկացեալ է. չ'եմ հասկնար թէ այսքան բազմաթիւ անդամներով ժողով կազմելու պատճառն ինչ է. պիտի ըսեն թէ երկու ժողով կայ եւ իւրաքանչիւրը 14 անդամէ կը բաղկանայ: Ինչ որ ալ ըլլայ, ես այս թիւը շատ կը գտնեմ, եւ կը կարծեմ թէ բազմութենէն օգուտ չ'ծագիր այլ միայն: Գլխաւոր մասը սա է որ մեծագոյն մաս գոյանալու արգելք է. մեր Ազգին մէջ պաշտօնները պատուոյ պաշտօններ են, եւ թոշակ ու շահ չ'ունին, հետեւապէս՝ ժողովական մը՝ երբ անձնական գործ ունենայ, չ'ներկայանար ժողովին, վասն զի ոչ ոք իւր անձէն աւելի ուրիշը կրնայ սիրել, եւ իւր շահը զոհել: Ահաւասիկ բազմաթիւ անդամներէ ժողով կազմելուն միտքը: Եւ միթէ բազմութեան մէջ արդարութիւնը պիտի գտնենք. տեսնենք ուրեմն թէ տէրութեան ժողովներն ինչպէս կը կազմուին, օրինակ առնենք անկէ:

Տէրութեան մէջ հասարակաց գործերը Յաստիճանի դատարաններէ կանցնին, որոնք մէկ ատենապետ եւ երկու կամ երեք անդամ ունին: Անդին եղեռնադատ ատենադատ կայ, որ աւելի ծանր խնդիրներով կ'ըբարդի, այն ալ սակաւաթիւ անդամներէ կը բաղկանայ, եւ այս ատենադատութեան վճիռ իսկ կ'արձակէ: Եւ միթէ ասոնցմէ աւելի ծանրակշիռ խնդիրներ ունինք, որ 28 անդամէ բաղկանայ մեր Վարչութիւնը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— (Ըրդիւնէ) Պաշտօնեաները անթոշակ ըլլալուն համար է:

(Միշտ)

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ.— (Շարձակէ) Խօսքս կ'եղրակացնեմ եւ կ'առաջարկեմ որ Քաղաքա-

կան ժողովոյ թիւը նոյնը մնայ, այն պայմանաւ որ կէսը յարաբերութեան ճիւղը ստանձնէ, եւ միւսը տեսուչ խորհրդոց պաշտօնը վարէ, ի հարկին կամ յորոշեալ ժամանակի համախորհուրդ նիստ ընելով:

ԵԱՂՃԵԱՆ Ս. ԷՖ.— Յիշուի գաւառացիներն իրենց անձնական գործոց ու ցաւերուն համար ազգային Պատրիարքարանին կը դիմեն, եւ գիտեն որ տեղական կառավարութեան Բեւառքի եւ Էրզրոմի պիտի դառնայ խնդիրը: Բայց ինչ ընեն խեղճերը, քրիստոնէից վկայութիւնը չ'բռնուիր, գործը յառաջ չ'երթար, ուստի ճարտարներն կը հատնի եւ Պատրիարքարանին կը դիմեն: Ասոր օգուտն այն է որ տեղական կառավարութիւնը երբ իմանայ՝ մտածելով որ Պատրիարքարանը Բ. Կրան Թագրիր կը գըրէ, կ'ակնածի, եւ քիչ շատ գործին կարգադրութեանը կ'աշխատի, եւ այսպէս շատ գործեր ալ Պատրիարքարանի միջնորդութեամբը նպաստաւոր կերպով կը վերջանան, եւ բռնաւորներն ալ կ'երկնչին Պատրիարքարանի ազդեցութենէն:

Եթէ գաւառական գործերը Վարչութեան պաշտօնը կը ծանրացնեն, կ'առաջարկեմ որ գաւառական մասնաժողով մը դրուի, ինչպէս որ կար երբեմն. այս մասնաժողովը գաւառական խնդիրներն քննելով՝ Վարչութեան ներկայացնէ արդիւնքը, եւ Վարչութիւնն ալ ըստ այնմ գաւառացոց ցաւերուն դարմանը կը մըտածէ եւ ի գործ կը դնէ:

(Շարձակէ՝ հասնուի յայտը իւրեւն)

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս. ԷՖ.— Խնդիրը Վարչութեան կազմակերպութեան վրայ է:

ՔԱՆԻ ՄԸ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ.— Քիչ մը բարձրաձայն խօսեցէք, չենք լսեր:

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս. ԷՖ.— Արքան զօրէ ձայնը՝ պիտի խօսիմ:

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ.— Փոյթ չէ, եթէ ձայներնիդ անզօր է, ուրիշ մը թարգման դրէք որ ձեր կողմէն խօսի: Ինձի ալ այնպէս ըսին:

(Միշտ)

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս. ԷՖ.— Ես կը կարծեմ որ մինչեւ ցարդ մեր ներքին գործոց գոհացուցիչ կերպով չ'կարգադրուելուն պատճառը Վարչութեան կազմակերպութեան մէջը չէ, ուստի

վարչական արդի դրութիւնն ինչ որ է՝ նոյնը անփոփոխ պահել կ'առաջարկեմ:

Առաջարկուած փոփոխութեան մէջ չեմ տեսներ այնպիսի վարչական դրութիւն մը, զոր օր մը փոխելու պէտք չ'ունենանք, եւ անոր տեղ ուրիշ մը դնելու չ'ենենք: Ժամանակաւ նոյն իսկ Ընդհանուր ժողովոյ դիւանին դէմ գանգատներ կը ըլլային թէ գործ չ'տեսնէր, բայց ի վերջէ՛ ձեռնհաս անձի մը շնորհիւ ներքին կանոնադրութիւն մը ունեցաւ ժողովը, եւ սկսաւ կանոնաւոր կերպով գործել: Քաղաքական ժողովը ալ միեւնոյն կարօտութիւնն ունի. ուստի կ'առաջարկեմ որ Ազգային ժողովը Վարչութեան ներքին կանոնադրութիւն մը տայ, եւ այն ատեն ամեն դիտողութիւններ պիտի վերջանան. եւ ոչ ոք մտքէ պիտի անցընէ վարչական դրութիւնը փոխել:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԿԱՊԵՏ.— Արովհետեւ վիճարանութեանց ատեն օրէն է ըստ կանոնագրի թեր ու դէմ խօսիլ, ուստի Շահպազ էֆէնտիի՝ ի նպաստ խօսող ատենաբանէ մը ետեւ՝ խօսք առի հակիրճ պատասխան մը տալու համար անոր:

Շահպազ էֆէնտիի ատենախօսութեան իմաստը, եթէ երբէք հասկցայ զայն, սա է կարծեմ. ատենաբանը Վարչութեան անգործութեան դատապարտուելուն պատճառը Վարչութեան կազմակերպութեան մէջ չ'գտնէր, այլ գաւառական այն տեսակ անհատական գործերուն կրնձայէ, որոնք կուգան կը ծանրանան Վարչութեան թիկանց վրայ, եւ յարաբերութեան անսպառ նիւթ եւ միանգամայն արգել կը դառնան հանրական գործոց տնօրէնութեան առջեւ:

Իրաւունք ունի Շահպազ էֆէնտի. Վարչութեան վրայ ծանրացող էն մեծ գործերը գաւառական խնդիրներն են, բայց արժան է զիտնալ թէ այդ տեսակ խնդիրներն որ գաւառներէն կուգան, արժան է խորհիլ թէ զըրկեալները կարող են իրենց իրաւունքը պաշտպանել իրենց հարստահարողներուն դէմ: Գաւառական գիւղի մը մէջ՝ ուր 18 տունի չափ բնակիչ կայ, հարստահարութիւն մը տեղի կուտանայ, ցորենի դէզ մը կայրեն, ոչխարաց հօտ մը աւարի կուտան, եւ այսպէս կեղեքումներ կը գործեն: Այս հարստահարութիւններն մասնաւոր են թէեւ, եւ անհատական սեպհակահարութեանց վրայ կը գործուի, բայց ոչ հարստահարեալը կրնայ բողոքել, եւ ոչ գիւղացի հայեր այս անիրաւութեանց կրնան վկայել, վասն զի թէ հարստահարեալ մասնաւոր անհատը, եւ թէ ուրիշներ, չէ թէ միայն կարող չեն իրենց դատը պաշտպանելու, այլ եւ կերկնչին որ քիչ ատենէն բռնաւորներն կուգան եւ աւելի անգութ կերպով իրենց վրէժխնդրութեան կրակը ամենուն վրայ կը թափեն. ուստի կը միարանին, ազգային Վարչութեան կը դիմեն եւ Ազգը տէր կը կանգնի իրենց:

Ազգային վանքի մը ստացուածքը կը յափըշտակուի, ինչ ընէ վանահայրը, երբ կը տեսնէ որ դատ բանալով տեղական կառավարութեան առջեւ՝ իւր եւ միաբանաց իրաւունքը եւ վանքին բովանդակ գոյքը վտանգի մէջ պիտի դնէ, ուստի կեդրոնական Վարչութեան պաշտպանութեան կապաստանի: Այս հանգամանքներով կուգան անհատակ գաւառական գործերը եւ ազգային Վարչութեան սեղանին վրայ կ'ընկնին: Քննեցէք թէ այս տեսակ խնդիրներ որ գաւառներէն կուգան. միթէ կեսարիոյ, Պրուսայի եւ Զմիւռնիոյ ժողովուրդը՝ այս տեսակ խնդիրներու համար կը դիմեն Պատրիարքարանի միջամտութեանը. ոչ երբէք, վասն զի այդ բարեկարգ գաւառներուն մէջ ժողովուրդը իւր իրաւունքը պաշտպանել զիտէ, վասն զի իւր խելքը, հոգն ու ստացուածքը չ'բռնաբարուիր, եւ անիրաւութիւն մը երբ դուն ուրեք տեղի ունենայ, զրկանք կրողը իւր դատը կը պաշտպանէ, եւ իրաւունքը կը գտնէ անահ աներկիւղ, Ես անձամբ Պրուսայի մէջ տեսայ, որ գործի տէրերն իրենց դատը կը պաշտպանէին այնքան ազդուութեամբ, որքան կրնան ունենալ մեր Պատրիարքարանի թագրիրները:

Ժամանակը միայն պիտի բառնայ այդ զեղծումներն, երբ արքունական Թանգիմաթն երկրին ամեն կողմը գործադրութիւն գտնէ, եւ իւր փրկաւէտ արդիւնքներն սիռէ մեր Օգոստոսիառ Վեհապետին կամաց համեմատ:

Աւստի դեռ այդ ժամանակը չ'եկած, չ'ենք կրնար այժմէն գաւառական այդ տեսակ խնդիրներ ի բաց մերժել Վարչութեան սեղանէն, եւ կը պարտաւորինք վարչական դրութիւնը բարեկարգել, եւ Վարչութեան մեքենան շարժուն վիճակի մէջ դնել, որ դառնայ ու գործէ: Արդի դրութիւնը ինքնին կապացուցանէ Վարչութեան կազմակերպութեան թերութիւնը:



նը . ժողով եւ խորհուրդ իրարու ձեռք բռնելու կեցեր են , երբ ժողովը գործել ուզէ , խորհուրդներն անոր ձեռքերը կը պրկեն օրինաց ցանցին մէջ , եւ չեն թողուր որ շարժի . Բախարաձարար երբ խորհուրդները գործել ուզեն , ժողովը անոնց ձեռքերը կը կապէ , եւ չթողուր որ շարժին : Այս կապն է ահաւասիկ , զոր կուզէ լուծել Վերաքննիչ յանձնաժողովը եւ կառավարիչ Տեսուչ ժողով մը կազմել՝ Քաղաքականին , եւ Տեսուչ խորհրդոյ ձեռնադատութիւնը ապահովելու համար : Ուրիշներ զանազան առաջարկութիւններ կրնեն , առ երեւոյթն գործոց բաժանման սկզբունքներով , Քաղաքական ժողովը իւր մէջ հատուածներու կուզեն բաժնել , բայց ես՝ որ Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութեան վրայ չեմ ուզեր յամառիլ , եւ պնդել , երբ աւելի լաւագոյնը եւ օգտակարը տեսնեմ , չտեսայ տակաւին պատճառ մը , փաստ մը , որ զիս համոզեր Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութիւնը ուրիշներու հետ փոխանակելու :

Արդ՝ կեդրակացնեմ խօսքս : Ինչ պատճառներ որ մէջ կը բերուին վարչական արդի գրութիւնը անփոփոխ պահելու համար , արգարացի չեն . եւ եթէ մեր նպատակն է որ Ազգին դաստիարակութեան , վանական , տընտեսական եւ գաւառական գործերը շուտափոյթ անօրինուելու վիճակին մէջ գրուին , պէտք է առաջարկուած փոփոխութիւնը ընդունիլ , յորմէ կրնանք օգուտ քաղել մեր ներկային մէջ եւ թէ առյապապն :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅՑ. — Ընդհանուր ժողովոյ համար այն խնդիրը միայն կրնայ վիճարանութեան նիւթ դառնալ , որ նախաքննիչ դիւանէ մը կուզայ , որ եզրակացութիւն մ'ունի , եւ որ տեղեկագրերի մը միջոցաւ կը պաշտպանուի :

Այն բազմաթիւ առաջարկութեանց մէջ որոնք վարչական մարմնոյն կազմակերպութեանը կը վերաբերին , միայն Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութիւնն կայ որ այս հանգամանքներն կ'ընծայէ , բայց անոր հետ միապէս միւս առաջարկութիւններն ալ վիճարանութեան բովը մտած են : Այս պարագային առջեւ խոնարհաբար կը յիշեցնեմ ժողովին իւր ներքին կանոնադիրը , որոյ տրամադրութեան համաձայն՝ թէեւ ամեն երեսփոխան իրաւունք ունի առաջարկութիւն բերելու , բայց այդ ա-

ռաջարկութիւնը նախաքննիչ դիւանի մը յառաջարկուելէ առաջ չկրնար հոս ուղղակի նկատագրութեան առնուիլ եւ վիճարանութեան նիւթ դառնալ :

Բայ ասկէ կը տեսնեմ նաեւ որ Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութեան հետ միւսներն նոյն են ըստ ոգւոյ եւ սկզբանց : Սակայն կարծելով թէ իրարու անհամաձայն են՝ կ'ընդգլխաբանեն : Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութիւնը ըստ սկզբան երեք կէտ ունի . առաջինն է տեսուչ խորհրդոց գործերը Քաղաքական ժողովէն դատել եւ անկախ ժողովի մը յանձնել . երկրորդն է այս ժողովոյ ընտրութիւնը Ազգային ժողովով կատարել . եւ երրորդն է անդամոց թիւերն նուազեցնել : Իւթիւճեան էֆէնտի կ'առաջարկէ որ 21 անդամէ բաղկացեալ ժողով մ'ըլլայ որ իր մէջ երեք հատուած ունենայ եօթնական անդամէ բաղկացեալ , եւ այս հատուածները զատ զատ Ազգային ժողովէն ընտրուին եւ ինքնին գործեն : Իսկ Վերաքննիչ յանձնաժողովը կ'առաջարկէ եօթնական անդամէ բաղկացեալ երկու ժողով ընտրել Ազգային ժողովէն , եւ երկուքն ալ ձեռնադատ եւ իրարմէ անկախ եւ պատասխանատու Ազգային ժողովին : Ինչ է ուրեմն այս երկուքին տարբերութիւնը . նա կուզէ որ անուանապէս մէկ ժողով ըլլայ եւ գործնականապէս երեք ժողով հաստատուի . Վերաքննիչ յանձնաժողովը կ'առաջարկէ ժողովները իրենց գործոց վիճակին համապատասխանող կերպարանքի մը մէջ դնել . ահաւասիկ կը տեսնուի որ ոգւոյն սկզբան տարբերութիւն չկայ հոս :

Մաղլըմեան էֆէնտի 28 անդամէ բաղկացեալ ժողով կ'առաջարկէ , Իւթիւճեան էֆէնտի նշանակած պայմաններուն ներքեւ . հոս ալ առաջարկութիւնն նոյնն է սկզբան կողմէ : Պէշիրեան էֆէնտի 14 անդամէ բաղկացեալ ժողով մը կ'առաջարկէ , իւրաքանչիւր անդամի իրաւունք կ'ուտայ երկերկու անձինք եւս ընտրելու , եւ անմիջապէս կուզայ իւր կազմած ժողովն իւր մէջ կը բաժնէ , իւրաքանչիւրին իրարմէ անկախ եւ առանձինն գործելու պայման կը դնէ . հոս ալ ահաւասիկ տեսանք որ բնաւ սկզբունքի տարբերութիւն չ'կայ : Բայց ամենն ալ որպէս թէ իրարու դէմ եղած ըլլան , կ'ընդգլխաբանեն : Արդ՝ եթէ այս իրարու ներհակ կարծեցեալ առաջարկութիւններն դիւանին կողմէ ըստ օրինի նախա-

ձեռնութեան դիւանին յղենք , հոս վիճարանութեան չ'ենթարկուած , բնականաբար Գիւլանը բոլոր առաջարկութեան հեղինակները պիտի հրաւիրէր , եւ հոն խիստ համառօտ վիճարանութեամբ ամենքն ալ պիտի համոզուին թէ իրարու դէմ չ'են , հետեւաբար հոս չ'պիտի վիճարանէին ի նանիր եւ ժամանակի կորուստ չ'պիտի տեղի ունենար : Իսկ եթէ իրենց առաջարկութիւնները բարեփոխութիւններ են , այն ատեն հարկ կ'ըլլար որ համառօտիւ ներկայացնէին իրենց բարեփոխութիւններն , որոց առջեւ կամ այն է որ Վերաքննիչ յանձնաժողովը կը պնդէր իւր առաջարկութեան վրայ , եւ կամ բարեփոխութիւններն կ'ընդունէր :

Ուրեմն կը խնդրեմ Գիւլանէն որ իմ այս դիտողութեանս համեմատ բոլոր առաջարկութիւններն յղէ նախաձեռնութեան դիւանին , որպէս զի մինչեւ յառաջիկայ նիստ կարենան բանակցիլ , համաձայնիլ , եւ արդիւնքը բերել հոս , որպէս զի վիճարանութիւնը նոյն նիստին վերջանայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ստոյգ է՝ որ ինչպէս Օգսէն էֆէնտի ըսաւ , ժողովին մատուցուած որ եւ է առաջարկութիւն նոյն խնդրոյն ձեռնհաս դիւանին կուղղուի ի նախաքննութիւն , այսպէս եւ Վերաքննիչ յանձնաժողովոյ օրինաց ծրագիրը յղուած է արդէն նախաձեռնութեան դիւանին եւ անոր տեղեկագրին հետ եկած է հոս : Այս ծրագրին ընդհանրութեան վերայ ինչպէս օրէն է ընդհանուր վիճարանութիւնը կատարուած եւ գոցուած է , եւ հիմա յօդուածներուն վրայ սկսած է վիճարանութիւնը :

Եթէ այս առթիւ նոր առաջարկութիւններ տեղի կուենան , եւ ժողովը կը կարծէ թէ զանոնք նախաձեռնութեան դիւանին յղել պատշաճ է , շատ աղէկ . բայց ես կը կարծեմ թէ զանոնք սովորական առաջարկութեանց պէս դիւանին յղել , եւ անոր տեղեկագրին սպասել աւելորդ է եւ չէ իսկ պատշաճ . վասն զի առնք պարզ առաջարկութիւններ չեն , այլ օրինական ծրագրի մը մէկ յօդուածի վրայ խորհրդածութեամբ խառն բարեփոխութիւններ : Ժողովը դժուարութիւն չունի զանոնք նկատողութեան առնելու , եւ պիտի գայ կէտ մը , որոյ առջեւ ժողովը զինքը լուսաւորուած պիտի գտնէ եւ խնդիրը քուէի ենթարկէ : Այդ կէտը հետի չեմ տեսներ : Այս նիստին ատենա-

գրութեանց մէջ բոլոր այս առաջարկութիւններն պիտի տպուին ամբողջ , դուք կը կարգաք զանոնք կանխաւ եւ կ'իմաստասիրէք : Մ. Գիւլանն ալ իւր կողմէ անոնց մէկ ծաղկաքաղը կը պատրաստէ յառաջիկայ նիստին ձեռք ներկայացնելու , եւ եթէ ժողովը բաւական լուսաւորուած կարծէ զինքը , համոզուած մը գոյանայ , խնդիրը կ'ընտուի քուէով . իսկ եթէ ոչ վիճարանութիւնը կը շարունակուի :

ԵՆՄԷՆԻՃԵԱՆ Ց. ԷՅՑ. — Փափաքելի է որ գէթ երկու օր առաջ ի լոյս ելնէ ատենագրութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս պահ մը յառաջ ըսի , ատենագրութեան հրատարակութեան գործը այնքան դժուարութիւններով պաշարուած է , որքան չերեւիր : Մէկ կողմէ սղագրական եղանակի մը չգոյութիւնը մեր դիւանագրայիլ էֆէնտիներու արդէն բաւական տառապանք կուտայ՝ ատենագրութիւնը գոհացուցիչ կերպով պատրաստելու համար . միւս կողմէ՝ սղագրական դժուարութիւններ պակաս չեն , խնայողութեան համար գործը նուազորդի կը գրուի , տեղական հեռաւորութիւն կայ , եւ մեր Ատենագրայիլ էֆէնտին այս ամէն դժուարութեանց հետ մաքառելով՝ մինչեւ որ օրին ատենագրութիւնը կը հասցնէ՝ բաւական նեղութիւն կը կրէ եւ չեմ կարծեր որ ուրիշ մը կարող ըլլայ անկէ աւելի բան մ'ընել : Ինչ որ է , յառաջիկայ նիստին մէջ Օրակարգը պիտի ըլլայ վիճարանութեան շարունակութիւնը . Գիւլանն ալ իւր կողմէ կը լուսաւորէ ժողովը եւ կը բացատրէ այն կէտերը , որոնք զիրար կը շօշափեն , եւ այս եղանակաւ թերեւս հասնի ժողովը վիճարանութիւնը գոցելու :

Նիստը վերջացնելէ առաջ պարտ կը համարիմ յայտարարել ժողովին , որ մեր պաշտօնակիցներէն

- Սահակ էֆէնտի Ապրօ
- Սիմօն պէյ Մաքսուտեան
- Սարգիս էֆէնտի Աղաբէգեան
- Կարապետ յ Շահպազ

զանազան արգելիչ պատճառներով այս երրորդ անգամն է որ բացակայ կը գտնուին : Ըստ օրինի պէտք էր զիրենք հրաժարեալ համարել , սակայն ո՞ գիտէ ինչ ծանր պատճառներ զիրենք հարկադրեր են անպատասխանի թողուլ մեր կոչնագիրը . ուստի չգրկուելու համար ի-

րենց աջակցութենէն բացառիկ արտօնութիւն մը խնդրելով՝ ժողովին կառաջարկեմ որ միանգամ եւս գրուի իրենց վերջնական կամքերնին հասկնալու համար, եւ կամ ընտրողական ժողովներուն յանձնարարենք որ անոնց կամքը հարցնեն եւ մեզ հաղորդեն :

Կը հարցնեմ ժողովին, որ դիտողութիւն մ'ունի այս մասին :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Բայց ինչ հարկ կայ վերստին անոնց կամքը հասկնալու . միթէ արդէն գրուած չէ իրենց, եւ Դիւանը պէտք է բացորոշակի յայտարարէ մեզ թէ պիտի գանձ թէ ոչ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ ժողովը ընդունի վերջին անգամ մ'ալ անոնց կամքը իմանալու առաջարկութիւնը, այսպիսի բացառութիւն մը անոնց անձնական արժանեաց բարձրութեան նկատմամբն չկրնար ընել, այլ իրենց երեսփոխանական պաշտօնին բնութեանը համար միայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մեր բացակայ պաշտօնակիցներէն թէեւ յատուկ գիր առած չենք ի պատասխանի մեր կոչնագրերուն, սակայն պատճառներ կան, որ կասկածել կուտան մեզ թէ գրերն ամենուն ձեռքը թերեւս հասած չըլլան, որոյ համար այս բացառիկ արտօնութիւնը կը խնդրեմ. եւ այս կերպով ժողովը ոչ միայն անոնց աջակցութեան ընծայած յարգը յայտնած, այլ եւ ազգու հրաւէր մ'ըրած կըլլայ որ իրենց պարտաւորութիւնը կատարեն :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Պատահմամբ Մագսուտեան պէյը տեսայ անցեալ օր. խօսք եղաւ ժողովին դումարման վրայ, եւ խոստացաւ ինձ՝ իւր բացակայութեան պատճառը գրել ժողովին : Բայց չեմ գիտեր ինչպէս եղաւ որ նամակ չտացանք իրմէն :

ՄԱԶԼԸՄԵԱՆ ԷՖ. — Պէտք է որ Դիւանը

մեզ վերջնական չկերպով ծանուցանէ թէ կոչնագրերն ստացած են թէ ոչ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Մեզի համար հըրածարեալ կը համարուին ըստ օրինի :

Տ. ՆԵՐՍԷՍ Վ. — Ես ալ երկու նիստէ ի վեր ազգային գործոց պատճառաւ բացակայ էի ժողովէն . այսօր ալ դարձեալ Սրբազան Պատրիարք Հօր յանձնարարած մէկ գործը կատարելու կզբաղէի, եւ հազիւ ժամը Յին կրցայ լինցնել եւ ժողովին գալ. եթէ չկարենայի աւարտել, երրորդ բացակայութիւն պիտի ունենայի այսօր, եւ կուզէի գիտնալ թէ միեւնոյն շնորհաց ես ալ պիտի կրնայի արժանանալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անպատճառ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ոչ երբէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եւ ինչպէս, Գրիտոստոսուր էֆէնտի, իմ հոգւոյս խորը թափանցել կարողացաք որ այսպէս բացասական պատասխան կուտաք իմ կողմէս : Թշնամական է ինձ համար ձեր խօսքը, կը մերժեմ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը ներէք, ես թշնամական ոգւով չըսի :

Ատենապետ փաշան խնդիրը քուէի կը դնէ, եւ ժողովը ընդհանուր հաւանութեամբ կընդունի առաջարկուած բացառիկ արտօնութիւնը՝ յիշեալ բացակայ երեսփոխանաց համար :

Ատենանը՝ ժամը 10 ին գոցուեցաւ :

ԱՏԵՆԱԴՊԻՐ  
Ն. Ս. ԱՍԻԱՅԵԱՆ  
ԱՏԵՆԱՊԵՏ  
Ն. Ս. ԱՍԻԱՅԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐԹՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորէն	Արքեպիսկ	Նարպէյ	ԱՅՆԱԳԵՑ
2. Տ. Ներսէս	Վ.	Ասլանեան	ԱՅՆԱԳՊԲ
3. Տ. Ամբրոսիոս	»	Իսկէնտէրեան	
4. Տ. Գէորգ	»	Դերձակեան	
5. Տ. Զաքարիա	»	Զիւմրիւթեան	
6. Տ. Խորէն	»	Կիւրոյեան	
7. Տ. Կարապետ	»	Սերոբեան	
8. Տ. Յովնաննէս	»	Փափաղեան	
9. Տ. Արիստակէս	Ք.	Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	»	Արամեան	
11. Տ. Գրիգոր	»	Աճէմեան	
12. Տ. Երեմիա	»	Խազիւղի	
13. Տ. Սուքիաս	»	Ստեփաննոսեան	
14. Տ. Վրդաննէս	»	Միջագիւղի	

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մաքսուտեան	պէյ	ԱՅՆԱԳԵՑ
2. Միքայէլ	Մամիկոնեան	էֆէնաբ	ԱՅՆԱԳՊԲ
3. Աբրահամ	Հարենց	»	
4. Աստիա	Եկիտպաչեան	»	
5. Խաչիկ	Ալեանաքեան	»	
6. Կարապետ	Փափաղեան	»	
7. Մկրտիչ	Էսաեան	»	
8. Յակոբ	Կոստանդ	»	
9. Յարութիւն	Գափամաճեան	»	
10. Մարգրիտ	Աբրահամեան	»	
11. Մարգրիտ	Արապեան	»	
12. Սիմոն	Միքայէլեան	»	
13. Սիմոն	Նորատունկեան	»	
14. Ստեփան	Խնդիրեան	»	

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԳԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԳԱՆ ԵՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ճախոշի ի Դիշանատան Պատրիարքարանի, և Ղալարիոյ Ս.  
Լուսաւորիչ Եկեղեցոյ բանկայր և Հայ գրարխանաւաց քով.